




Ուղեցույց

ԳԵՆԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՄՏԱՑՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիոլոգիայի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):



**ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՄՏԱՑՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄԱՏԵՂ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

1. ՆԱԽԱԲԱՆ

Գենետիկ նյութերի կոնցեպտուալ ընկալում, որպես քանակական, տնտեսական արժեք, որակապես նոր երևույթ է մեր իրականության մեջ, սակայն կենսաբանական պաշարների օգտագործման հմտությունները և դրա մասին գիտելիքները վճռորոշ դեր են խաղացել մարդկության գոյատևման պատմության մեջ: Գենետիկական պաշարների նշանակությունն ու արժեքը մեծ վերելք ապրեցին վերջին հինգ հարյուր տարիների ընթացքում: 18-19-րդ դարերում, բույսերի և կենդանիների խաչասերումը (բուծումը) խթան հանդիսացավ խիստ հատուկ տեսակների ստեղծմանը, որոնք մեծ արժեք ունեցան այդ ժամանակաշրջանի շուկայական տնտեսության մեջ: Բույսերի և կենդանիների բուծման մեջ մասնագիտացող նորաստեղծ հաստատությունները ձգտում էին տնտեսական պաշտպանության միջոցառումներ իրականացնել իրենց կողմից արհեստական ընտրության միջոցով ստացած տեսակների նկատմամբ: Անցած դարի ընթացքում տեղի ունեցած գենետիկ նվաճումները թույլ էին տալիս հմտորեն ձևափոխել կենդանի օրգանիզմների գենետիկական կոդը, որն իր հերթին անհրաժեշտություն առաջացրեց փոփոխություններ կատարել գույքային և հեղինակային իրավունքների կանոնակարգման մեջ: Վերջին քսան տարիների ընթացքում կենսատեխնոլոգիայի ոլորտում տեղի ունեցած առաջընթացն այժմ հնարավորություն է տալիս գեներ տեղափոխել մեկ օրգանիզմից մյուսը, ինչն իր հերթին լայն հեռանկարներ է բացում գենետիկական պաշարների կատարելագործման ասպարեզում, որի հետևանքով բարձրանում է գենետիկական պաշարների դերն ու նշանակությունը, դրանց տնտեսական ուժը: Այդ իսկ պատճառով գենետիկական պաշարների մատչելիության հիմնահարցի հանգուցալուծումը դարձել է հրատապ: Կենսատեխնոլոգիայի ոլորտում տեղի ունեցած առաջընթացի արդյունքում ի հայտ եկած գենետիկական պաշարների արժեքի վերելքի հետ մեկտեղ, աճել են նաև մարդու գործունեության հետևանքով առաջացող կենսաբազմազանության կորստի ծավալները: Զարգացող պետությունները գենետիկական պաշարների մատչելիության ռեժիմը դիտում են որպես կարևորագույն հնարավորություն համաշխարհային քաղաքականության մեջ նրանց դիրքի ամրապնդման, զարգացման և անհրաժեշտ կապիտալի ներհոսք ապահովելու համար, քանի որ հենց այդ պետություններում է

գտնվում երկրագնդի կենսաբազմազանության գերակշռող հատվածը: Պետք է ընդունել, որ կենսատեխնոլոգիայի զարգացման մեջ առաջընթացն ու գենետիկական պաշարների պահպանությունը գտնվում են փոխկախվածության մեջ, իսկ կայուն զարգացումը դժվար է պատկերացնել առանց կենսատեխնոլոգիաների զարգացման: Ի վերջո, կենսատեխնոլոգիայի ոլորտում տեղի ունեցած առաջընթացը, ինչպես նաև տնտեսության զարգացման հետ համընթաց աճող բնության պահպանության անհրաժեշտությունը, ամուր հիմքեր ստեղծեցին Կենսաբանական Բազմազանության մասին Կոնվենցիայի ընդունման համար:

2. ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐԸ ԵՎ ՀԱՄԱԴՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիան

Գենետիկական պաշարների օգտագործման արդյունքում ստացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման հասկացության սկզբնաղբյուր է հանդիսանում 1992թ. Ռիո Դե Ժանեյրոյում ընդունված Կենսաբանական Բազմազանության մասին Կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա)¹: Ստորագրելով Կոնվենցիան, մասնակից պետությունները պատրաստակամություն են հայտնել մշակել ներպետական օրենսդրության և ռազմավարության գենետիկական պաշարների մատչելիության կարգավորման և օժանդակման համար՝ հանուն երեք փախկապակցված նպատակների, դրանք են՝

1. Հայաստանի Հնարապետությունը վավերացրել է Կոնվենցիան 1993թ.-ին և դասվում է Կոնվենցիայի մասնակից պետությունների շարքին

- կենսաբազմազանության պահպանությունը
- կայուն տնտեսական զարգացումը
- սոցիալ-տնտեսական արդարությունը:

Կոնվեցիայի գերագույն ղեկավար մարմինը անդամ պետությունների ներկայացուցիչներից ձևավորված Կողմերի կոնֆերանսն է:² Այն հետևում է անդամ պետությունների կողմից Կոնվեցիայով սահմանված դրույթների իրականացման ընթացքին, սահմանում է լուծման ենթակա խնդիրները և ծրագրում է հետագայում նախաձեռնելիք միջոցառումները: Ղեկավար մարմինն իրավասու է նաև փոփոխություններ կատարել Կոնվեցիայում, հիմնել համապատասխան փորձագետներից կազմված խորհրդատվական մարմիններ, քննության առնել անդամ պետությունների հաշվետվությունները և համագործակցել այլ միջազգային կազմակերպությունների հետ: Կողմերի կոնֆերանսի շրջանակներում կազմակերպվում են քննարկումներ կենսաբազմազանության պահպանության կայուն օգտագործման վերաբերյալ, և Կոնվեցիայով ամրագրված նորմերի կիրառման ճանապարհին ծառացած խնդիրների լուծման համար առաջարկվում են դրանց լուծման օպտիմալ տարբերակներ:

Եթե մինչ Կոնվեցիայի ընդունումը, կենսաբազմազանության պահպանման համար գործադրվող ջանքերն ուղղված էին բուսական և կենդանական կոնկրետ տեսակների և ապրելավայրերի ու աճելավայրերի պահպանմանը, ապա այժմ, Կոնվեցիայի համաձայն, էկոհամակարգերը, բուսական և կենդանական տեսակներն ու գեները պետք է օգտագործվեն ի շահ մարդկային բարեկեցության, ընդ որում դա պետք է կատարվի այնպիսի եղանակով, որը չի հանգեցնի կենսաբանական բազմազանության անկմանը: Հետևաբար, կենսաբանական բազմազանության պահպանությունը ամբողջ մարդկության խնդիրն է և հանդիսանում է զարգացման պրոցեսի անբաժանելի մասը: Կոնվեցիայի կարգավորման ոլորտում են հայտնվել բոլոր էկոհամակարգերը, բուսական և կենդանական աշխարհի տեսակները, և ընդհանրապես գենետիկական պաշարները: Այն կանոնակարգում է գենետիկական պաշարների պահպանման և դրանց կայուն օգտագործման հիմնահարցերը: Նմանատիպ հիմնահարցերից է նաև գենետիկական պաշարների օգտագործման արդյունքում ստացված օգուտների արդարացի և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրման հիմնահարցը: Կոնվեցիայի 15-րդ հոդվածը կարգավորում է գենետիկական պաշարների մատչելիության խնդիրները:

2. Կենսաբանական Բազմազանության մասին Կոնվեցիա, Հոդված 23, (1992թ.)

Հաշվի առնելով, որ Կոնվեցիան հիմնվում է պետությունների սեփական կենսաբանական պաշարների նկատմամբ ինքնիշխան իրավունքի վրա, գենետիկական պաշարների մատչելիության հետ կապված հարցերը պատկանում են ազգային կառավարություններին և կարգավորվում են ազգային օրենսդրությամբ: Նույն հոդվածը սահմանում է, որ ուսումնասիրությունների և զարգացումների համար, ինչպես նաև առևտրային նպատակներով գենետիկական պաշարների օգտագործումից ստացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման հետ կապված հարցերը պետք է սահմանվեն կողմերի օրենսդրական, վարչական և ռազմավարական միջոցառումներով: Վերջիններս սահմանվում են կոնվեցիայի 16-րդ և 19-րդ, իսկ ֆինանսական մեխանիզմները՝ 20-րդ և 21-րդ հոդվածներով: Գենետիկական պաշարների մատչելիության տրամադրումը հիմնվում է փոխհամաձայնության վրա, և կարգավորվում է 15-րդ հոդվածի դրույթներով: Կողմերը ձգտում են իրականացնել գիտական հետազոտություններ, որոնք պայմանավորված են գենետիկական պաշարների օգտագործմամբ և ապահովել պայմաններ գենետիկական պաշարները տրամադրող կողմի անմիջական մասնակցության համար, իսկ հնարավորության սահմաններում՝ վերջինիս տարածքում: 16-րդ հոդվածը սահմանում է տեխնոլոգիաների, ներառյալ կենսաբանական տեխնոլոգիաների, ինչպես նաև դրանց մատչելիության և փոխանցման վերաբերյալ դրույթները: Կողմերին հնարավորություն է տրվում ներկայացնել կամ մատչելի դարձնել այն տեխնոլոգիաները, որոնք նպաստում են բնական պաշարների պահպանությանն ու կայուն օգտագործմանը: Հոդվածը կարևորում է զարգացող պետություններին տեխնոլոգիաների տրամադրման դեպքում, նախատեսել արտոնություններ: Արտոնագրված և մտավոր սեփականություն հանդիսացող տեխնոլոգիաների մատչելիության դեպքում նախատեսվում են պայմաններ, որոնք խիստ հաշվի են առնում մտավոր սեփականության իրավունքները: Հոդվածը ամրագրում է օրենսդրական, վարչական և ռազմավարական միջոցառումների անհրաժեշտությունը, որոնք կապահովեն տեխնոլոգիաների մատչելիության և հասանելիության կարգավորումը, ինչպես նաև փոխանցումը մասնավոր հատվածին: Մասնավոր հատվածի կողմից տեխնոլոգիաների մշակումը և փոխանցումը, ի շահ պետական և մասնավոր հատվածի զարգացմանը, նույնպես ամրագրված է տվյալ հոդվածով: 17-րդ հոդվածը մանրամասնում է բոլոր հնարավոր աղբյուրներից տեղեկատվության փոխանակման անհրաժեշտությունը, ներառյալ տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվությունը: 19-րդ հոդվածը սահմանում է, որ կողմերը պետք է ունենան համապատասխան օրենսդրական, վարչական և ռազմավարական միջոցներ՝ կենսաբանական տեխնոլոգիաների ոլորտում հետազոտություններ անցկացնելու համար, հատկապես, երբ դրանք նախատեսում են գենետիկական պաշարների օգտագործումը զարգացող երկրների կողմից: Փոխհամաձայնության հիման վրա, այդ տեխնոլոգիաների փոխանցումից ստացված օգուտները օգտագործվում են համատեղ արդար և հավասար հիմունքներով:

Հայտնի է, որ կենսաբազմազանության գերակշռող հատվածը գտնվում է զարգացող երկրների տարածքում: Այդ հանգամանքը համարվում է այդ երկրների տնտեսական և սոցիալական զարգացման գրավականներից մեկը: Պատմությունից հայտնի է, որ օտարերկրյա մասնագետները գենետիկական պաշարներ են հավաքել և արտահանել դրանց ծագման վայր հանդիսացող երկրներից՝ արտադրական և առևտրային օգտագործման նպատակով: Հիմնականում այդ պաշարների հետազոտման և մշակման արդյունքում ստացված ու որոշակի շուկայական արժեք ունեցող արտադրանքը հետագայում արտոնագրվում և պաշտպանվում էր հեղինակային իրավունքի նորմերով, իսկ անհրաժեշտ գենետիկական պաշարներ տրամադրող երկրները զրկված էին հատուցում պահանջելու իրավունքից:

Կենսաբանական բազմազանության մասին Կոնվեցիան ճանաչում է անդամ պետությունների ինքնիշխան իրավունքները իրենց տարածքում գոյություն ունեցող գենետիկական պաշարների նկատմամբ, և սահմանում է, որ գենետիկական ռեսուրսների մատչելիություն տրամադրվում է փոխադարձ համաձայնեցված պայմաններով գենետիկական պաշարների ծագման երկիր հանդիսացող պետության նախապես հիմնավորված համաձայնությամբ:³ Այժմ, կոնվենցիայի համաձայն, որք որևէ միկրոօրգանիզմ, բույս կամ կենդանի օգտագործվում է ապագայում առևտրային կիրառություն ունեցող արդյունքներ ստանալու նպատակով, օգտագործված գենետիկական պաշարների ծագման երկիրը ձեռք է բերում հատուցում պահանջելու իրավունք, որում և կայանում է գենետիկական պաշարների օգտագործման արդյունքում ստացված օգուտների արդար և հավասար հիմքունքներով համատեղ օգտագործման համակարգի էությունը: Հատուցումը կարող է տրամադրվել դրամի, հետազոտությունների տվյալ գենետիկական պաշարների ծագման երկիր հանդիսացող պետության գիտնականների մասնակցության և նրանց որակավորման բարձրացման, կենսոլորտային և դրա զարգացման համար անհրաժեշտ սարքավորումների փախանցման, և հատուցման պահանջի իրավունք ունեցող երկրի գենետիկական պաշարների օգտագործումից ստացված օգուտի համատեղ օգտագործման տեսքով:

Շատերը համարում են, որ Կոնվեցիան առաջադիմական գործիք է ներպետական մակարդակով կենսաբազմազանության պահպանության և կարգավորման համար: Այն դեպքում, երբ կենսամատչելիության հիմնահարցերի շուրջ Կոնվեցիայի քննարկումները սառեցված են քաղաքական բարդություններով, գենետիկ պաշարների մատչելիությունը կարգավորող ներպետական օրենսդրություն մշակելու շարժառիթները շարունակում են աճել:

3. Կենսաբանական Բազմազանության Կոնվեցիա, Հոդված 15

Հարկ է նշել, որ մի շարք երկրներում արդեն իսկ մշակվել են նմանատիպ իրավական ակտեր, որոնք այլ պետությունների համար կարող են ծառայել որպես օրինակելի տարբերակներ՝ իրենց ներպետական օրենսդրական խնդիրները լուծելու համար:

Ավելին, բազմաթիվ երկրների, ինչպօես պետական, այնպես էլ հասարակական հատվածների ներկայացուցիչները դիտում են գենետիկական պաշարների մատչելիության մասին օրենսդրությունը որպես կարևորագույն գործոն, Կոնվեցիայով ամրագրված այլ հիմնահարցերի կանոնակարգման ապահովման համար որպես հիմնական միջոց:

Կոնվեցիայի նպատակները իրականացնելու համար ռազմավարություն մշակողները պետք է հաղթահարեն չորս կարևորագույն արգելքներ.

- 1) գենետիկական պաշարների մատչելիության ռազմավարության մեր <<գենետիկական պաշարներ>> հասկացությունը պետք է դիտարկել որպես կարգավորող հարաբերությունների հատուկ օբյեկտ, քանի որ գենետիկական պաշարները գոյություն ունեն անկախ պետական սահմաններից և որոշ պաշարներ օրգանապես կապակցված են միևյանց հետ:
- 2) գենետիկական պաշարները ամբողջ աշխարհում դարեր շարունակ օգտագործվել, վերափոխվել և պահպանվել են հատուկ կենտրոններում, ուստի արդյունավետ ռազմավարական ծրագիրը պետք է համապատասխան դրույթներ պարունակի նախ նախքան Կոնվեցիայի ուժի մեջ մտնելը՝ ստեղծված <<es situ>> հավաքածուների վերաբերյալ, քանի որ այդ հավաքածուների նկատմամբ սեփականության իրավունքները մինչ Կոնվեցիայի ուժի մեջ մտնելը, կարող են փոխանցված լինել մասնավոր անձանց:
- 3) նախքան օգուտների տեղաբաշխման բարդություններին անդրադառնալը, պետք է հստակ սահմանվեն նաև գենետիկական պաշարների սեփականության և փաստացի տիրապետման ռեժիմները: Այս խնդիրը բավականին բարդ է, քանի որ սեփականության կամ փաստացի տիրապետման իրավունքների սուբյեկտները կարող են լինել տարբեր: Օրենքով սահմանված և հիմնական իրավունքների միջև առկա հակասությունները էլ ավելի են բարդացնում խնդիրը:
- 4) իրավական, ինստիտուցիոնալ և գիտական կարողությունների մատչելիության կարգավորմանն ուղղված գործողությունների իրականացումն է: Ի վերջո, կենսունակ ռազմավարություն ունենալու համար, անհրաժեշտ է ներդաշնակել տարբեր նպատակներ հետապնդող շահառուների հաճախ իրարամերժ շահերը:

2.2 ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՄՏԱՑՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գենետիկական պաշարների օգտագործման արդյունքում ստացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման համակարգը, որպես այդպիսին, միայն ՀՀ-ում չէ, որ նորամուծություն է: Այն, որպես նոր համակարգ, Եվրոպայի մի շարք պետություններում գտնվում է մշակման փուլում և շրջանառվում է իրավական նախագծերի տեսքով: Սակայն կան երկրներ, որոնք այդ համակարգը արդեն իսկ ընդունել և դրել են լայն կիրառության մեջ: Այսպես, 1996թ. հուլիսին, Անդյան Պակտի Հանձնաժողովը, <<Գենետիկական պաշարների մատչելիության վերաբերյալ համընդհանուր համակարգի մասին>> թիվ 391 արաշմամբ (այսուհետ՝ Անդյան Պակտի մատչելիության համընդհանուր համակարգ), ձեռնարկել է գենետիկական պաշարների մատչելիության վերաբերյալ տարածաշրջանային միջոցառումներ, որոնք գործում են Լատինական Ամերիկայի հինգ պետություններում (Բոլիվիա, Կոլումբիա, Էկվադոր, Պերու և Վենեսուելա): Վերոհիշյալ որոշման նպատակն է կարգավորել գենետիկական պաշարների և դրանց ածանցյալների մատչելիության հետ կապված հարաբերությունները անդամ պետություններում: 1995թ-ի մայիսին Ֆիլիպինների Հանրապետության նախագահը արձակել է <<Գիտական, առևտրային և այլ նպատակներով Կենսաբանական և Գենետիկական պաշարների, դրանց ածանցյալների և վերջիններիս օգտագործումից ստացված արտադրանքների հետազոտման կարգավորման շրջանակների ու ուղեցույցերի սահմանման մասին>> թիվ 247 հրամանագիրը: Հրամանագիրը նախատեսում է կենսաբանական բազմազանության հետազոտական գործունեությունը կարգավորող շրջանակները: Հետագայում, 1996թ. հունիսի 21-ին, Ֆիլիպինների Հանրապետությունը ընդունել է վերոհիշյալ հրամանագրի կիրարկումն ապահովող <<Կենսաբանական և գենետիկական պաշարների մշակման վերաբերյալ կիրարկման կանոններ>> թիվ 96-20 գերատեսչական ակտը (այսուհետ՝ Կիրարկման կանոններ):

Չնայած նրան, որ մի շարք երկրներում այս ոլորտում իսկ ձեռնարկվել են օրենսդրական բարեփոխումներ, և կատարված բարեփոխումները հիմնականում այս կամ այն կերպ կարգավորում են Կոնվենսիայից բխող պահանջները, այնուամենայնիվ, տարբեր երկրների կողմից իրականացվող ներպետական, օրենսդրական բարեփոխումների համար միատեսակ պահանջներ

ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, 2002թ. ապրիլի 7-19-ը Հաագայում գումարած Կողմերի վերցերորդ Կոնֆերենսի թիվ 24 որոշմամբ հաստատվեց <<Գենետիկական պաշարների մատչելիության և դրանց օգտագործումից ստացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման վերաբերյալ Բոննի ուղեցույցը>>:

2.3 ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՆՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

2002թ. Հայաստանը միացել է Բոննի ուղեցույթին: Այն հաստատվել է Կողմերի վեցերորդ կոնֆերանսի թիվ 24 որոշմամբ և բաղկացած է մի շարք դրույթներից, որոնց հիմնական նպատակներն են՝

- կենսաբազմազանության պահպանությունն ու կայուն օգտագործումը
- գենետիկական պաշարների մատչելիությունը և դրանց օգտագործումից ստացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման ապահովումը
- օգուտների համատեղ օգտագործման սկզբունքների և մեթոդների մծակումը
- օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործմանն ուղղված բանակցություններին նպաստող համապատասխան ներուժի ապահովում՝ զարգացող և հատկապես ամենաաղքատ պետությունների համար, ինչպես նաև վերջիններիս ներսում առանձին զարգացող <<կղզյակների>> համար
- <<Կենսաբազմազանության պահպանության կոնվեցիա>>-ի պայմանների կատարմանը նպաստելուն ուղղված միջոցառումներ
- Էկոլոգիապես անվտանգ կենսատեխնոլոգիաների փոխանցմանը նպաստելը՝ զարգացող և հատկապես ամենաաղքատ պետությունների և վերջիններիս ներսում առանձին զարգացող <<կղզյակների>> համար
- Ֆինանսական մեխանիզմների ապահովումը

- օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործմանն ուղղված համագործակցությանը նպաստող <<քլիրինգ հաուզի/պաշտոնական խորհրդակցական մարմնի>> մեխանիզմի հզարացմանը ուղղված միջոցառումները
- մատչելիության և օգուտների համատեղ օգտագործման հիմունքների մեխանիզմների ներդրում, որոնք հաշվի են առնում ավանդական գիտելիքները և տեղաբնակ համայնքի փորձը:

Հարկ է նշել, որ տվյալ դրույթները կարող են ներառվել կենսաբազմազանության ազգյին ռազմավարության մեջ: Կողմերը պետք է ունենան օգուտների համատեղ օգտագործման համակարգի մեկ միասնական մարմին, որը կապահովի տեղեկատվության մատչելիությունը: Այս լիազորությունով օժտված մարմինը, ներպետական օրենսդրության և ռազմավարության պահանջներին համապատասխան, պատասխանատու է՝ (հոդված 14)

- բանակցությունների ընթացքի համար
- նախապես ձեռք բերված պայմանավորվածությանը նպաստող լիարժեք տեղեկատվության մատչելիության համար
- մոնիթորինգի և արդյունքների գնահատման համար
- համաձայնագրով նախատեսված պայմանների պատշաճ կատարման համար
- բոլոր շահագրգիռ կողմերին, ներառյալ համայնքներում, օգուտների համատեղ օգտագործման գործընթացին մասնակից դարձնելու համար:

Կանոնները նախատեսում են նաև պայման, որի համաձայն լիազոր մարմինը իր իրավասությունները կարող է փոխանցել այլ կողմի (հոդված 15): Ուղեցույցը հաժվի է առնում, որ պայմանավորվող կողմեր կարող են հանդիսանալ ցանկացած, ինչպես տվյալ գենետիկ պաշարի ծագում ունեցող, այնպես էլ այդպիսի պաշարներ ստացող երկրներ և այդ նպատակով ամրագրում է դրանց պարտականությունները՝ (հոդված 16)

- ունենալ այդ համակարգը կանոնակարգող համապատասխան օրենսդրություն
- օգտագործել քլիրին հաուզի պաշտոնական խորհրդակցական մարմնի մեխանիզմը՝ մատչելիության ապահովման համար

- երաշխավորել, որ առևտրային և այլ նպատակներով գենետիկական պաշարների օգտագործումը չի վտանգի գենետիկական պաշարների ավանդական օգտագործմանը
- իր գործողությունների ընթացքում հաշվի առնել նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության հետևանքները
- կիրառել այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորինս կապահովեն բոլոր ծահգրգիռ կողմերի, հատկապես տեղական համայնքի մասնակցությունը
- ներգրավել տեղական համայնքին և հաշվի առնել այդ համայնքի շահագրգռվածության շրջանակները միմյանցից փոխհամաձայնություն ձեռք բերելու փուլում:

Բոննի ուղեցույցն ամրագրում է, որ մինչև գենետիկական պաշարներ հավաքելը, հավաքող կողմը պետք է ունենա գրավոր համաձայնություն, որը կսահմանի՝ տվյալ գենետիկական պաշարների ծագման երկրի գործադիր մարմնի նախապես հիմնավորված համաձայնությունը, գենետիկական պաշարների հավաքման տարածքը, հավաքելու արդյունքում ստացվելիք օգուտների ձևերը և չափերը, տվյալ գենետիկական պաշարների հավաքի ժամկետները, նպատակները, և ի վերջո՝ ինչ պայմաններով հավաքող կողմը կարող է ձեռք բերված գենետիկ պաշարները փախանցել այլ կողմին: Ուղեցույցը սահմանում է նաև, որ կնքված պայմանագրի ժամկետի ավարտմամբ, գենետիկական պաշարների օգտագործման դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել նոր պայմանավորվածություններ և կնքել նոր պայմանագրեր: Ուղեցույցի 46-49-րդ դրույթները սահմանում են օգուտներ տեսակները, ստացման ժամկետները, համատեղ օգտագործման մեխանիզմների հետ կապված մանրամասնությունները: Առանձին դրույթներով ամրագրված է, որ օգուտների համատեղ օգտագործումն իրականացվում է բոլոր շահագրգիռ կողմերի միջև (պետական, հասարակական կազմակերպություններ, գիտական հիմնարկներ և համայնքներ), ինչպես նաև նախատեսվում է, ու օգուտների համատեղ օգտագործման մեխանիզմները կարող են փոփոխվել առանձնահատուկ դեպքերի համար, որոնք նախապես որոշվում են կողմերի համաձայնությամբ: պայմանագրի և ազգային օրենսդրության խախտման դեպքերը բացահայտելու համար, ուղեցույցը նախատեսում է կնքված պայմանագրերով և համաձայնագրերով նախատեսված պայմանների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություն, իսկ դրանց չկատարման կամ խախտման դեպքերում՝ տուգանքների կիրառման, պայմանագրերի վաղաժամկետ դադարեցման և այլ պատժամիջոցներ կիրառելու հնարավորություններ:

Վերոգրյալից պարզորոժ երևում է, որ Բոննի ուղեցույցը, որպես խորհրդատվական փաստաթուղթ, կարող է հիմք ծառայել ներպետական օրենսդրության մշակման համար: Այն բավականին հստակ սահմանում է գենետիկական պաշարների օգտագործման հետ կապված հարաբերությունների կարգավորման հիմնական դրույթները: Այնուամենայնիվ, իրավական տեսանկյունից, նծյալ ուղեցույցը պարունակում է հասկացություններ, որոնք մեկնաբանման կարիք ունեն, մասնավորապես՝ գենետիկական պաշարների, մատչելիության, գենետիկական պաշարների օգտագործման արդյունքում ստացված օգուտների արդարացի և հավասար հիմունքներով բաշխման, նախապես հիմնավորված համաձայնության, փոխադարձ համաձայնեցված պայմանների հասկացությունները:

2.4 ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոնվեցիայի 15-րդ հոդվածով ամրագրված դրույթները կյանքի կոչելու համար կարևոր նախապայման է հանդիսանում <<գենետիկական պաշարներ>> հասկացության սահմանումը, որը, որպես այդպիսին, նախանշում է գենետիկական պաշարների մատչելիությունը կարգավորող ռեժիմի շրջանակները: Կոնվեցիայի 2-րդ հոդվածը սահմանում է <<գենետիկական պաշարներ>> որպես փաստացի կամ պոտենանցիալ գենետիկական նյութ, իսկ գենետիկական նյութը՝ որպես ժառանգականության գործառնական միավորներ պարունակող բուսական, կենդանական, մանրէական կամ այլ ծագում ունեցող ցանկացած նյութ: հետևաբար, 15-րդ հոդվածով ամրագրված գենետիկական պաշարների մատչելիության և դրանց օգտագործման հետևանքով ստացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործումը կարգավորող ռեժիմը պետք է սահմանափակվի Կոնվեցիայի 2-րդ հոդվածով ամրագրված սահմանումներով: Բացի վերոհիշյալից, Կոնվեցիայի շրջանակներում <<գենետիկական պաշարներ>> հասկացությունը սահմանափակվում է այն պաշարներով, որոնք տրամադրվում են այդպիսի պաշարների ծագման երկիր հանդիսացող Պայմանավորվող Կողմի կողմից կամ այն պաշարներով, որոնք Կողմերը ստացել են Կոնվեցիայով սահմանված դրույթներին համապատասխան: Այստեղից ակնհայտ է դառնում, որ կոնվեցիայի <<Օգտագործվող հասկացություններ>> բաժնում <<գենետիկական պաշարներ>> հասկացությունը բավականին ընդգրկուն է, բայց ոչ սպառիչ, և ամրագրվել է այդ բաժնում ընդհանրացված

տեսքով: Ուստի, ներպետական օրենսդրության խնդիրներից մեկը պետք է լինի այդ հասկացության հնարավորինս համապարփակ սահմանումը: Օրինակ՝ Ֆիլիպինների Հանարպետության Կիրարկման կանոնների 3-րդ մասի համաձայն՝ ակտը կանոնակարգում է՝

ա) հանրային սեկտորում առկա ամբողջ կենսաբանական և գենետիկական պաշարները, ներառյալ մասնավոր հողատարածքներում առկա կենսաբանական և գենետիկական պաշարները, որոնք կարող են օգտագործվել օտարերկրյա կամ տեղացի անհատների, իրավաբանական անձանց, հիմնականների և այլ կազմակերպությունների կողմից, անկախ դրանց պատկանելիությունից՝ պետական կամ մասնավոր

բ) բացառությամբ սովորույթի ուժի կամ ավանդական եղանակով օգտագործումից, ցանկացած կենսաբանական հետզոտական գործունեություն, որն ուղղված է այդ պաշարների բացահայտմանը, ուսումնասիրմանը կամ օգտագործմանը՝ դրագործական, գյուղատնտեսական կամ առևտրային նշանակությամբ:

Նույն ակտի 2-րդ մասը սահմանում է <<կենսաբանական պաշարներ>> որպես գենետիկական պաշարներ, օրգանիզմներ կամ դրանց մասեր, մարդկության համար իրական կամ պոտենցիալ օգտագործման արժեք ունեցող էկոհամակարգերի պոպուլյացիաներ կամ դրանց ցանկացած բիոտիկ բաղադրատոմսեր, ինչպիսիք են՝ կենդանի մասնակի կամ ամբողջական պահպանվող բույսերը, սերմերը, հյուսվածքները և այլ բազմացող նյութերը, կենդանիները, միկրոօրգանիզմները:

Անդյան Պակտի մատչելիության համընդհանուր համակարգի 3-րդ հոդվածը սահմանում է ակտի կարգավորման շրջանակը: Նշված ակտով սահմանված ռեժիմը ընդգրկում է այն գենետիկական պաշարները, ներառյալ դրանց ածանցյալները և ոչ նյութական բաղադրիչները, որոնք տրամադրված են դրանց ծագման վայրը հանդիսացող անդամ պետության կողմից, ինչպես նաև միգրացիոն գենետիկական պաշարները, որոնք բնական պատճառներով գտնվում են անդամ պետությունների տարածքում: Նույն ակտի 1-ին հոդվածը սահմանում է <<գենետիկական պաշարներ>> հասկացությունը որպես իրական կամ պոտենցիալ արժեք ունեցող գենետիկական ինֆորմացիա կրող ցանկացած կենսաբանական նյութ, իսկ ոչ նյութական բաղադրիչները՝ որպես գենետիկական պաշարների, դրանց ածանցյալների կամ դրանք ընդգրկող կենսաբանական պաշարների հետ կապված իրական կամ պոտենցիալ արժեք ունեցող ցանկացած

գիտելիք, նորամուծություն կամ նորարարություն անհատական կամ կոլեկտիվ կենսափորձ, անկախ դրանց մտավոր սեփականության համակարգով պաշտպանվածության առկայությունից կամ բացակայությունից:

Վերոհիշյալ երկու ակտերի գենետիկական պաշարների մատչելիության և դրանց օգտագործումից առաջացած արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման վերաբերյալ դրույթները իրենց կարգավորման շրջանակներում ներառում են նաև գենետիկական պաշարների ածանցյալները, դրանց օգտագործման պրոցեսում առաջացող կոդմնակի կամ գուգորդված արտադրանքը և սինթեզված նյութերը: Անդյան Պակտի մատչելիության համընդհանուր համակարգի 1-ին հոդվածը սահմանում է ածանցյալները որպես կենդանի օրգանիզմների նյութափոխանակությունից ստացված մոլեկուլ կամ մոլեկուլների համակցություն կամ բնական մոլեկուլների խառնուրդ, ներառյալ կենսաբանական ծագում ունեցող կամ անկենդան օրգանիզմների անմշակ մզվածքները: Սինթեզված նյութերը սահմանվում են որպես գենետիկական ինֆորմացիայի կամ կենսաբանական այլ մեկուկուլների օգտագործմամբ իրականացվող արհեստական պրոցեսի միջոցով ստացված նյութ: սա իր հերթին ներառում է արհեստական պրոցեսով ստացված թերմշակ մզվածքներն ու նյութերը: Ֆիլիպինների հանրապետության կիրարկման կանոնների երկրորդ մասը սահմանում է կոդմնակի արտադրանքը որպես կենսաբանական և գենետիկ պաշարներից վերցված ցանկացած մաս, ինչպիսիք են՝ կաշին, եղջյուրները կամ եղջյուրանման ելուստները, փետուրները, մորթին, ներքին օրգանները, արմատները, ցողունը, ճյուղերը, տերևները, ծաղիկները, ներառյալ կենսաքիմիական պրոցեսով կամ ցիկլով անուղղակիորեն ստացված միացությունները: Նույն ակտը ածանցյալները սահմանում են որպես արյունից, ճարպերից, խեժերից, գեններից, սերմերից, սպորներից, ծաղկափոշուց և նմանատիպ այլ կենսաբանական և գենետիկական պաշարներից ստացված նյութեր:

Հանրագումարի բերելով վերոգրյալը, կարելի է ասել, որ գենետիկական պաշարներ հասկացության մեջ անհրաժեշտ է բացի մարդուց, ներառյալ էուկարիոտների և պրոկարիոտների կայսրություններին պատկանող (ներառյալ վիրուսները) բոլոր բուսական և կենդանական ծագում ունեցող օրգանիզմները, բացի մարդուց, ինչպես նաև նրանց ածանցյալները: ըստ կենդանական աշխարհի կայսրությունների և թագավորությունների, գենետիկական նյութի աղբյուրներ կարող են հանդիսանալ, մասնավորապես՝

ԲՈՒՑՄԵՐԸ		
1.Բույսը ամբողջությամբ	2.Ցողունները	3.Սերմերը
4.Ծաղիկները	5.Պալարը	6.Պտուղը
7.Կոճղարմատը	8.Տերևները	9.Բողբոջները
10.Ծաղկափռոցները	11.Արմատապտուղը	12.Սոխուկը
13.Բջջային և հյուսվածքային կուլտուրաները		

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ		
1.Կենդանի առանձնյակները և նրանց կերպարանափոխության ձևերը	2.Օրգանները	3.Հյուսվածքները
4.Էղջուրները, եղջերանման ելուստները, սմբակները	5.Ժանիքները	6.Աճառը և կոճիկը
7.Կաճին, մաճկը, մորթին	8.Փետուրները	9.Ձուն, փկնկիթը
10.Էրրիոնները	11. Ձվաբջջիչները և սպերմատազոիդները	12.Արյան առանձին բջիջները

ՄԼԿԵՐԸ (ՄՏՈՐԱԿԱՐԳ ԵՎ ԲԱՐՁՐԱԿԱՐԳ)		
1.Պտղամարմինը	2.Սնկամարմինը	3.Միջելը և հիֆերը
4.սպորները	5.Բջիջները	

ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ ԵՎ ՎԻՐՈՒՄՆԵՐԸ

ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՄ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԿՈՆՍՈՒՆԱԿ ԵՎ ՄԵՌԱԾ ՄՁՈՒԿՆԵՐԸ
1.մոլեկուլները՝ քրոմոսոմներ, պլազմիդներ, գեներ, սպիտակուցներ, ամինաթթուներ, նուկլեոտիդներ, վիտամիններ, հակաբիոտիկներ և այլն
2.Խեժերը
3.Ճարպերը

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ գենետիկական պաշարների տրամադրման պայմանագրի կողմերը, այդ պայմանագրի մշակման ժամանակ պարտադիր կերպով պետք է հաշվի առնեն պայմանագրի առարկան հանդիսացող պաշարների հետ սիմբիոզի վիճակում գտնվող կամ ասոցիացված սնկերի, բակտերիաների, վիրուսների, արմատապալարների առկայությունը, ու առանձին նժեն դրանց հավանական գիտական կամ արտադրական (առևտրային) օգտագործումից, եթե այդպիսիք նախատեսվում են, ակնկալվող օգուտների համատեղ օգտագործման նպատակներն ու ուղղությունները:

Մարդու գենետիկական նյութը լիովին համապատասխանում է Կոնվեցիայում տեղ գտած <<գենետիկական նյութ>> հասկացության սահմանմանը, քանի որ մարդու մեջ առկա գենետիկական նյութն ունի կենդանական ծագում և պարունակում է ժառանգության ֆունկցիոնալ միավոր: Մարդու մեջ պարունակվող գենետիկական նյութի նմուշների հավաքումն ու դրանց հետազոտումը մարդու էվոլյուցիայի, ինչպես նաև հիվանդությունների նկատմամբ նրա դիմադրողականության և զգայունության խորը իմացության աղբյուրը կարող է հանդիսանալ⁴: Մարդկության համար նման արժեք ներկայացնող նմուշները իրենցից ներկայացնում են գենետիկական պաշարներ՝ գենետիկական նյութ, որն ունի <<իրական կամ պոտենցիալ արժեք>>: Այնուամենայնիվ, նախքան Կոնվեցիայի ընդունումը, տեղի ունեցող քննարկումներից հետևում է, որ մարդու գենետիկ պաշարները չեն հանդիսանում Կոնվեցիայի կարգավորման օբյեկտ:⁵

2.5 ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման պահանջների հետ միասին Կենսաբանական բազմազանության մասին կոնվեցիան նախատեսում է գենետիկական պաշարների օգտագործում համապատասխան մատչելիության ապահովմամբ: Կոնվեցիայի 2-րդ հոդվածը, որը սահմանում է Կոնվեցիայում օգտագործվող հիմնական հասկացությունները, գենետիկական պաշարների մատչելիություն հասկացության որևէ մեկնաբանում չի պարունակում: Այս հասկացության պարզաբանմանը տեղ չի հատկացվել նաև Գենետիկական պաշարների մատչելիության և դրանց օգտագործումից ստացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման վերաբերյալ Բոննի Ուղեցույցը:

4. Աննա Մարիա Գիլիս, <<Մարդկանին բազմազանության պատկերի ստացումը. Գենետիկներն ու մարդաբանները պլանավորում են բացահայտել բնական մարդու պատմությունը մարդու գեների փոփոխման միջոցով>>, Կենսաբանական Գիտություն 44:8 (1994թ.).

5. Կողմերի երկրորդ Կոնֆերանս, թիվ 11 Որոշման 2-րդ կետ, Քարտուղարության հաժվետվություն, Ջակարտա, 6-17 նոյեմբերի, 1995թ., Կողմերի վեցերորդ Կոնֆերանս, Որոշում թիվ 24, Կանոն 9, Հաագա, Նիդերլանդներ, 7-19 ապրիլի, 2002թ.

Հետևաբար, հիմք ընդունելով Կոնվեցիայի 15-րդ հոդվածի 1-ին մասը, կարելի է ենթադրել, որ խնդրո առարկա հասկացության պարզաբանման հարցը պետք է լուծվի ներպետական օրենսդրությամբ:⁶ Պարզաբանելու համար, թե կոնկրետ որ գործունեությունը կարող է որակվել որպես մատչելիություն, ներպետական օրենսդրությամբ պետք է ձևակերպվի <<գենետիկական պաշարների մատչելիություն>> հասկացության հստակ սահմանումը: Արդյոք գենետիկական պաշարների ֆիզիկական տիրապետումը, հավաքումը կամ փոխանակումը ենթադրում է, որ գենետիկական պաշարները մատչելի են այդ գործունեությունը իրականացնողի համար: Ի դեպ, գենետիկական պաշարների մատչելիության օրենսդրության կարգավորման ոլորտում, որպես կարգավորման օբյեկտ պետք է ներառել ոչ միայն գենետիկական պաշարների, այլ նաև դրանց ոչ նյութական բաղադրիչների և կենսատեխնոլոգիաների օգտագործման և փոխանցման հետ կապված իրավահարաբերությունները: Կողմերի 5-րդ Կոնֆերանսը որոշում է կայացրել գենետիկական պաշարների նկատմամբ իրավունքներ վերապահել նաև տեղաբնակներին, նկատի ունենալով վերջիններիս դարեր շարունակ շրջակա միջավայրի օգտագործման արդյունքում կուտակված բավականին հարուստ կենսափորձը:⁷ Հարկ է նշել, որ տեղաբնակների սերնդեսերունդ փոխանցվող կենսափորձը ամրագրված է Կոնվեցիայում որպես կարգավորման ինքնուրույն առարկա: <<Կենսափորձ>> հասկացության ճիշտ կիրառությունը ուղղակիորեն պայմանավորված է դրա ճիշտ ընկալման հետ: Միացյալ Ազգերի կրթական, գիտական և մշակույթի կազմակերպության գլխավոր տնօրենը, բնութագրել է <<Կենսափորձ>> հասկացությունը հետևյալ կերպ. <<Բնիկները տիրապետում են իրենց շրջակա միջավայրի վերաբերյալ հսկայական գիտելիքների, որոնք ձեռք են բերվել և կուտակվել դարերի ընթացքում որպես բնության հետ անմիջական շփման արգասիք: լինելով հարուստ, բարդ և բազմազան էկոհամակարգերի բաղկացուցիչ մաս, բնիկները տիրապետում են բույսերի և կենդանիների առանձնահատկությունների, էկոհամակարգերում տեղի ունեցող պրոցեսների և դրանց օգտագործման և կառավարման մեխանիզմների վերաբերյալ գիտելիքների>>:

6. Կենսաբանական Բազմազանության մասին Կոնվեցիա, Հոդված 15, մաս <<Ճանաչելով սեփական բնական պաշարների նկատմամբ պետությունների ինքնիշխան իրավունքները՝ գենետիկական պաշարների մատչելիությունը որո՞ճելու իրավունքը պատկանում է ազգային կառավարություններին և կարգավորվում է ազգային օրենսդրությամբ>> (<<ԿՈՆՎԵՑԻԱ Կենսաբանական Բազմազանության Մասին>>, ՀՀ բնապահպանության նախարարություն, Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր, աչ պաշտոնական թարգմանություն, 2005թ.)

7. Կողմերի 5-րդ Կոնֆերանս, Որոշում 26, Նաիրոբի, 15-26 մայիսի, 2000թ.

Կենդանի օրգանիզմների զարգացման օրենքների իմացությունը զուգընթաց, մարդը ստանում է բուսականության և կենդանիների զարգացման վրա՝ իր համար ցանկալի ուղղությամբ ներգործելու ավելի մեծ հնարավորություններ:⁸ Ուստի, ի նկատի ունենալով, որ բնիկների⁹ գենետիկական պաշարների օգտագործման կենսափորձը ունի գիտական ուսումնասիրությունների և հետևաբար կենսատեխնոլոգիաների զարգացման հիմքում դրվելու մեծ հեռանկարներ, որն իր հերթին նախադրյալներ կստեղծի նյութական և ոչ նյութական բարիքների ստացման նպատակով գենետիկական պաշարների օգտագործման համար, կենսափորձը ընդգրկվել է գենետիկական պաշարների մատչելիության և դրանց օգտագործումից ստացված օգուտների արդար հիմունքներով համատեղ օգտագործման համակարգի կարգավորման ոլորտում:

<<Մատչելիություն>> հասկացությունը բավականին ընդլայնված սահմանումով աչքի է ընկնում Անդյան պակտի մատչելիության համընդհանուր համակարգի 1-ին հոդվածը: Նշված հոդվածը <<Մատչելիություն>> հասկացությունը սահմանում է որպես տարբեր նպատակների՝ ներառյալ ուսումնասիրության, կենսաբանական բազմազանության մշակման, պահպանման, արտադրական կիրառության կամ առևտրային օգտագործման համար ex-situ և in-situ պահպանվող գենետիկական պաշարների և նրանց ածանցյալների կամ որ նյութական բաղադրիչների¹⁰ ձեռք բերում և օգտագործում: Կոնվեցիայի գլխավոր նպատակներից մեկը գենետիկական պաշարների նկատմամբ բոլոր իրավունքների պահպանման հետ մեկտեղ դրանց մատչելիության ապահովումն է: մատչելիության պահանջը վերաբերվում է ինչպես գենետիկական պաշարներին, այնպես էլ տեխնոլոգիաներին:¹¹ Կոնվեցիայի 16-րդ հոդվածը սահմանում է <<Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ընդունելով, որ տեխնոլոգիան ներառում է նաև կենսատեխնոլոգիան և, որ ինչպես տեխնոլոգիայի մատչելիությունը, այնպես էլ Պայմանավորվող կողմերի միջև դրա փոխանցումը հանդիսանում են սույն կոնվեցիայի նպատակներին հասնելու կարևոր տարրեր, պարտավորվում է, սույն հոդվածի դրույթներին համապատասխան, և/կամ մյուս պայմանավորվող կողմի համար դուրին դարձնել այն տեխնոլոգիաների մատչելիությունը, որոնք ունեն կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման հետ կամ...>>¹²:

8. Сергеев А.П., Право интеллектуальной собственности в Российской Федерации Учебник М., 1999г., ст. 702

9. Տես էջ 21, 22

10. Տես էջ 12

11. Մելլեր Ա., Դաթֆիլդ Գ. <<Մատչելիության և օգուտների բաշխման կարգավորում>>, Կենսատեխնոլոգիայի և զարգացման հրահանգիչ, N49, էջ 3-7

12. <<ԿՈՆՎԵՑԻԱ Կենսաբանական Բազմազանության Մասին>>, ՀՀ բնապահպանության նախարարություն, Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր, ոչ պաշտոնական թարգմանություն, 2005թ.

Եթե ընդունենք, որ լայն առումով տեխնոլոգիան (կենսատեխնոլոգիան) մարդու կողմից առաջարկվող ստեղծագործական աշխատանքի որդյունք է, որի էությունը կայանում է առօրյա գործունեության ոլորտում ծագած խնդրի տեխնիկական լուծումը գտնելու մեր¹³, սահմանված կարգով արտոնագրվելուց հետո պաշտպանվում է հեղինակային իրավունքով, ապա միանշանակ կարելի է ասլ, որ Կոնվեցիայի 16-րդ հոդվածով ամրագրված դրույթները կյանքի կոչելու ճանապարհին հիմնական խոչընդոտներ կարող են հանդիսանալ հեղինակային իրավունքի միջազգային և ներպետական օրենսդրությամբ սահմանված նորմերը: Հետևաբար, այս կոնտեքստում <<Մատչելիություն>> հասկացությունը դիտարկելիս, այն պետք է ընկալել որպես գենետիկական պաշարների և նրանց ածանցյալների կամ որ նյութական բաղադրիչների մատչելիությունը կարգավորող և հեղինակային իրավունքի նորմերի ներդաշնակեցում:

2.5 ՆԱԽԱՊԵՍ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոնվեցիայի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ <<գենետիկական պաշարների մատչելիությունը կարգավորվում է գենետիկական պաշարներ տրամադրող Պայմանավորվող կողմի նախնական հիմնավորված համաձայնության հիման վրա, եթե այդ կողմն այլ որոշում չկայացնի>>:¹⁴ Նշված հոդվածով ամրագրված, նախապես հիմնավորված համաձայնության պահանջը հնարավորություն է տալիս Կոնվեցիայի մասնակից պետություններին վերահսկողություն իրականացնել իրենց տարածքում առկա գենետիկական պաշարների նկատմամբ, քանի որ, ըստ Կոնվեցիայի 3-րդ հոդվածի, պետություններին է պատկանում իրենց սեփական գենետիկական պաշարները շահագործելու ինքնիշխան, բացառիկ իրավունքը: Մյուս կողմից, Կոնվեցիայի 15-րդ հոդվածի 2-րդ մասը պարտավորեցնում է կողմերին ջանքեր գործադրել գենետիկական պաշարների մատչելիությունը ավելի դյուրին դարձնելու համար: Հետևաբար, ներպետական օրենսդրությամբ կարգավորվող ուզուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման մեխանիզմը պետք է ապահովի գենետիկական պաշարների

13. Сергеев А.П., Право интеллектуальной собственности в Российской Федерации Учебник М., 1999г., ст. 408

14. <<ԿՈՆՎԵՑԻԱ Կենսաբանական Բազմազանության Մասին>>, ՀՀ բնապահպանության նախարարություն, Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր, ոչ պաշտոնական թարգմանություն, 2005թ.

մատչելիության նկատմամբ վերահսկողության անհրաժեշտություն, գենետիկական պաշարների մատչելիության պարզ ընթացակարգերի ու նախապես հիմնավորված համաձայնության ստացման բավականաչափ ճկուն պահանջների միջև անհրաժեշտ հավասարակշռություն: Ընդմիջ, հստակ մեկնաբանման կարիք է զգում նաև Կոնվեցիայի 15-րդ հոդվածի 5-րդ մասում տեղ գտած <<...եթե այդ կողմն այլ որոշում չկայացնի>> պայմանը: Վերջինս կարող է 15-րդ հոդվածի 5-րդ մասի երկիմաստ մեկնաբանման պատճառ հանդիսանալ: Մի դեպքում կարելի է ենթադրել, որ գենետիկական պաշարներ տրամադրող կողմից տրված նախապես հիմնավորված համաձայնությունը հանդիսանում է գենետիկական պաշարների մատչելիության համար անհրաժեշտ և բավարար պայման: Մեկ այլ դեպքում, Կոնվեցիայի 15-րդ հոդվածի 5-րդ մասի կոնտեքստում դիտարկելիս, կարելի է ենթադրել, որ եթե գենետիկական պաշարներ տրամադրող երկրում չկան գենետիկական պաշարների մատչելիության սահմանափակումներ, ապա գենետիկական պաշարներ տրամադրողի կողմից տրված նախապես հիմնավորված համաձայնություն չի պահանջվում:¹⁵

Լայն իմաստով նախապես նախապես հիմնավորված համաձայնությունը պետք է ընդունել որպես որոշակի գործունեություն իրականացնելու համար տրված համաձայնություն, որը տրվում է այդ գործունեությունը իրականացնելու հիմնավորումների, դրանցից բխող միջոցառումների և դրա հետ կապված պոտենցիալ ռիսկերի ու իրապես կանխատեսվող հետևանքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելու պայմանով:¹⁶ Անդյան Պակտի մատչելիության համընդհանուր համակարգի 22-րդ հոդվածը գենետիկական պաշարների մատչելիության ստացման համար դիմող կողմից պահանջում է տրամադրել իրավաբանորեն ճիշտ, ամբողջական և հավաստի տեղեկատվություն: նույն հոդվածի համաձայն դիմում պետք է նշվեն.

- տեղեկատվություն դիմորդի վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դիմորդի գործունակությունը հավաստող փաստաթղթեր

15. Կողմերի 3-րդ Կոնֆերանս, Գործադիր քարտուղարի նշումներ, (Բուենոս Այրես 5 հոկտեմբերի, 1996թ.)

16. Լեյլ Գլովկա, ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՑԻԱՅԻ ՈւՂԵՑՈՒՅՑ, Բնապահպանական քղաքականության և իրավունքի մասին թիվ 30 փաստաթուղթ, Բնության պահպանության միջազգային միության շրջակա միջավայրի իրավական կենտրոն, Բնության պահպանության միջազգային միության կենսաբանական բազմազանության ծրագիր, Գլենդ, Շվեյցարիա և Քեմբրիջ, ՄԹ, 1994թ.

- տեղեկատվություն գենետիկական կամ կենսաբանական պաշարների և դրանց ածանցյալների կամ դրանց հետ կապված որ նյութական բաղադրիչների տրամադրողի վերաբերյալ
- տեղեկատվություն տեղական աջակցող հաստատության կամ անձի վերաբերյալ
- տեղեկատվություն ծրագրի համակարգողի և աշխատանքային կմբի վերաբերյալ, ներառյալ նրանց ինքնակենսագրությունները
- տեղեկատվություն այն գործունեության բնույթի վերաբերյալ, որի իրականացման համար հայցվում է գենետիկական պաշարների մատչելիություն
- գործունեության իրականացման տեղանքը կամ տարածքը՝ աշխարհագրական կոորդինատներով:

Նախապես հիմնավորված համաձայնության ստացման համար նույնանման պահանջներ են սահմանում նաև Ֆիլիպինների Հանարպետության նախագահի հրամանագիրն (8-րդ մաս) ու Կիրարկման կանոնները (հոդված 6): Ըստ սահմանված պահանջների, գենետիկական պաշարների մատչելիություն հայցող դիմորդը պետք է ներկայացնի մտադրությունների մասին գրություն և դիմում, որում պետք է նշվեն հավաքման կամ հետազոտման ենթական նմուծների տեսակները և քանակությունը, հավաքման նպատակը և վայրը, ինչպես նաև տեղեկատվություն նախատեսվող ծրագրի իրականացման գործընթացում ներգրավվող օտարերկրյա և տեղական հետազոտողների վերաբերյալ: Դիմումին պետք է կցվեն հետազոտությունների ծրագրի նախագիծը, որում նշվում են ծրագրի նպատակներն ու իրականացման ժամկետը, ծրագրով նախատեսված կենսաբանական պաշարները, այդ պաշարների հավաքման եղանակը, մեթոդոլոգիան, նշված պաշարների փոխադրման նախատեսված միջանկյալ և վերջնական նշանակետերը, հավաքված կենսաբանական պաշարների օգտագործման եղանակները, ծրագրի ֆինանսավորման և բյուջեի նկարագրությունը, կենսաբանական բազմազանության վրա հնարավոր ազդեցությունը, նախատեսված միանվագ և երկարաժամկետ (տարաժամկետ) հատուցման մանրամասնությունները, ինչպես նաև տեղական այն հաստատությունների ցանկը, որոնք կարող են որոշակի հատուցում ստանալ: Նախապես հիմնավորված համաձայնության ստացման ընթացակարգն իր մեջ ներառում է նաև հանարության իրազեկման գործընթաց: Այսպես, Ֆիլիպինների Կիրարկման կանոնները (7-րդ մաս) գենետիկական պաշարների ցանկացած հավաքման գործունեության վերաբերյալ նախատեսում են հանրության իրազեկման միջոցառումներ, այդ թվում հասարակական լսումներ տարբեր զանգվածային լրատվական միջոցներով: Սահմանված

կարգի համաձայն, բոլոր դիմումների և հավաքման ծրագրերի վերաբերյալ արձանագրությունները և կազմված գործերը պետք է լինեն հանրության համար մատչելի, իսկ դիմումներից վերցված համապատասխան քաղվածքները՝ հրապարակվեն տպագիր ու ազգային լայն շրջանառություն ունեցող զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև տեղական լրատվության միջոցներով, որտեղ ու տվյալ ծրագրով նախատեսվող գործունեությունը պետք է իրականացվի (հոդված 28):

Կարգավորման ենթական մեկ այլ կարևոր հարց է այն, թե որ մարմինը պետք է օժտված լինի նախապես հիմնավորված համաձայնություն տրամադրելու իրավասությամբ: Նման կարգավորման համար հիմք է հանդիսանում Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին մասը, որը սահմանում է. <<Ճանաչելով սեփական բնական պաշարների նկատմամբ պետությունների ինքնիշխան իրավունքը՝ գենետիկական պաշարների մատչելիությունը որոշելու իրավունքը պատկանում է ազգային կառավարություններին և կարգավորվում է ազգային օրենսդրությամբ>>:¹⁷ Խնդրի լուծման ֆիլիպինյան տարբերակի համաձայն, կենսաբանական և գենետիկական պաշարների հավաքման, հետազոտման, շահագործման և օգտագործման հետ կապված հարցերի կարգավորման լիազորությունները վերապահվում են միջգերատեսչական կոմիտեին: Ֆիլիպինների Հանրապետության նախագահի հրամանագրի 6-րդ մասը սահմանում է Կենսաբանական և Գենետիկական Պաշարների միջգերատեսչական Կոմիտեի ստեղծման կարգը և իրավասությունները, իսկ Ֆիլիպինների կիրարկման կանոնները (10-րդ մաս) մանրամասնում են վերոհիշյալ կոմիտեի և նրա անդամ հաստատությունների գործառնությունները, իրավունքներն ու պարտականությունները: մասնավորապես՝ կոմիտեն քննության է առնում հետազոտություններ իրականացնելու նպատակով համապատասխան պայմանագրեր կնքելու համար ներկայացվող դիմումները, որոշում է գենետիկական նյութի քանակը և դրա տրամադրման նպատակահարմարությունը, լիազորում է համապատասխան հաստատություններին գենետիկական նյութի ապօրինի արտահանման դեմ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու իրավասություններով, ըստ սահմանված կարգի քննության է առնում ստացված նախապես հիմնավորված համաձայնության վկայականի առկայությունը և այլն: Ֆիլիպինների Կիրարկման կանոնների 2-րդ մասի համաձայն, նախապես հիմնավորված համաձայնությունը դիմորդի կողմից տեղական համայնքներից, բնիկներից, համապատասխան պահպանվող տարածքի ղեկավարությունից կամ հողի սեփականատիրոջից, կենսաբանական բազմազանության մշակման հետ կապված

17. <<ԿՈՆՎԵՆՑԻԱ Կենսաբանական Բազմազանության Մասին>>, ՀՀ բնապահպանության նախարարություն, Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր, ոչ պաշտոնական թարգմանություն, 2005թ.

գործունեություն իրականացնելու նպատակների և շրջանակների ամբողջական բացահայտման պայմանով, նախքան այդ գործունեության նախաձեռնումը ստացվող համաձայնությունն է: Նույն մասի r) կետի համաձայն, Ֆիլիպինների Հանրապետության տեղական համայնքներ և բնիկներ են համարվում այլոց բնութագրմամբ և ինքնաբնութագրմամբ որոշվող սոցիալական ծագման այն հոմոգեն հասարակությունը, որի անդամները շարունակաբար ապրելով հանրոքեն սահմանված և սահմանափակված տարածքում որպես ընդհանուր սովորությային, լոգվական ու այլ մշակութային առանձնահատկություններով կապված համայնք, և գաղութացման հետևանքով երևան եկած քաղաքական, սոցիալական և մշակութային փոփոխություններին իրենց ցուցաբերած դիմադրության շնորհիվ պատմականորեն տարանջատվել են ֆիլիպինցիների մեծամասնությունից:

Ըստ Անդյան Պակտի, մատչելիության համընդհանուր համակարգի (հոդված 1) ազգային իրավասու մարմինը Անդյան Պակտի յուրաքանչյուր մասնակից պետության կողմից ստեղծվող ներօտեսական մարմին է, որն իրավասու է տրամադրել գենետիկական պաշարներ և հետևաբար կնքել կամ վերահսկել գենետիկական պաշարների մատչելիության տրամադրման պայմանագրեր: Ազգային իրավասու մարմինը հետևում է սահմանված կարգով ստացվող նախապես հիմնավորված համաձայնության տրամադրման գործընթացին, ինչպես նաև վերահսկում է գենետիկական պաշարների պահպանության վիճակը և կատարում ազգային գենետիկական պաշարների ու դրանց ածանցյալների գույքագրում (հոդված 50): Ընդամին Անդյան Պակտի մատչելիության համընդհանուր համակարգի 2-րդ գլխի 7-րդ հոդվածի համաձայն, ամդամ պետությունները ճանաչում են գենետիկական պաշարների և դրանց ածանցյալների վերաբերյալ բնիկների և տեղական համայնքների կենսափորձից բխող ավանդական գիտելիքների և նորամուծությունների նկատմամբ վերջիններիս իրավունքները: Անդյան Պակտի մատչելիության համընդհանուր համակարգի 1-ին հոդվածն իր հերթին սահմանում է <<բնիկներ, աֆրոամերիկյան և տեղական համայնքներ>> տերմիններ որպես մարդկանց խումբ, որը իր սոցիալական, մշակութային և տնտեսական պայմաններով տարբերվում է ազգային բնակչության այլ սեկտորներից, մասամբ կամ ամբողջությամբ ղեկավարվում է իր սեփական սովորություններով կամ ավանդույթներով կամ հատուկ օրենսդրությամբ, և անկախ իրավական կարգավիճակից, մասամբ կամ ամբողջությամբ պահպանում է իր սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական կառույցները: Ի լրումն, Անդյան Պակտի մատչելիության համընդհանուր համակարգի 41-րդ հոդվածը պարտավորեցնում է գենետիկական պաշարների մատչելիություն հայցող դիմորդին կնքել գենետիկական պաշարների մատչելիություն ստանալու հետ կապված լրացուցիչ պայմանագիր մասնավոր սեփականություն հանդիսացող այն օբյեկտի սեփականատիրոջ, տիրապետողի կամ

կառավարչի հետ, որտեղ գնտվում են նախատեսվող գործունեության օբյեկտ հանդիսացող գենետիկական պաշարներ: Հարկ է նկատել, որ վերը նշված լրացուցիչ պայմանագրի կնքումն առանց մատչելիության պայմանագրի գենետիկական պաշարների մատչելիություն չի ապահովում: Ըստ Անդյան Պակտի մատչելիության համընդհանուր համակարգի 1-ին հոդվածի, մատչելիության պայմանագիրը համաձայնություն է պետությունը ներկայացնող իրավասու պետական մարմնի և անձի առջև, գենետիկական պաշարների, դրանց ածանցյալների և ոչ նյութական բաղադրիչների մատչելիության տրամադրման պայմանների վերաբերյալ:

Կատարված վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ նախապես հիմնավորված համաձայնության պահանջը Կոնվեցիայի մասնակից պետություններին հնարավորություն է տալիս թեև Կոնվեցիայով սահմանված ընդհանուր դրույթներին չհակասող եղանակներով, բայց և այնպես, ըստ իրենց հայեցողության օգտագործել իրենց պետական սահմանների ներսում գտնվող գենետիկական պաշարներ: Մյուս կողմից, այն հանդիսանում է գենետիկական պաշարների մատչելիության ապահովման միջոց: Ամիրաթեժտ է կարևորել նաև այն հանգամանքը, որ նախապես հիմնավորված համաձայնության պահանջի ապահովման գործընթացում բացի պետական իշխանական լիազորություններով օժտված մարմիններից, էական դերակատարություն ունեն նաև տեղական համայնքները ու մասնավոր անձինք: Սակայն, հարկ է նշել, որ Անդյան պակտի մատչելիության համընդհանուր համակարգով և Ֆիլիպինների կիրարկման կանոններով ամրագրված <<տեղական համայնքներ և բնիկներ>> հասկացությունների մեկնաբանումը կիրառելի չէ Հայաստանի Հանրապետության համար, որը կարելի է ասել, մոնոէթնիկ հասարակության գերակշռող մաս կազմում են հայերը և չկան ավանդույթների, սովորույթների և ընդհանրապես մշակութային առանձնահատկությունների էական տարանջուտմներ: Թերևս վերոհիշյալ մեկնաբանություններին Հայաստանի Հանրապետությունում առավել մոտ են կանգնած տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք ներկայացնում են տեղական համայնքի բնակչության շահերը: Նշվածը կարող է կիրառվել որպես Անդյան Պակտի մատչելիության համընդհանուր համակարգով և Ֆիլիպինների կիրարկման կանոններով սահմանված <<տեղական համայնքներ և բնիկներ>> հասկացությունների մեկնաբանումների անալոգիա:

2.7 ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրային հարաբերություններ մեծ, եթե ոչ անկյունաքարային տեղ են զբաղեցնում Գենետիկական պաշարների մատչելիության և դրանց օգտագործումից ստացված արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման ռեժիմում, իսկ փոխադարձ համաձայնեցված պայմանները այդ հարաբերությունների անքակտելի մաս են: <<Փոխադարձ համաձայնեցված պայմաններ>> արտահայտությունը տեղ է գտել Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 4-րդ մասում, որը սահմանում է՝ <<Տրամադրման դեպքում մատչելիությունն ապահովում է փոխադարձ համաձայնեցված պայմաններով և կարգավորվում է սույն հոդվածի դրույթներով>>:¹⁸ Մինչ օրս, թե միջազգային, և թե ներպետական մակարդակով, այս հասկացության մեկնաբանությունը ապահովող որևէ փաստաթուղթ չի մշակվել, չնայած որ այն կապված է նախապես հիմնավորված համաձայնության և օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման հասկացությունների հետ: Այնուամենայնիվ, մինչ օրս նախաձեռնված բոլոր միջոցառումները ստեղծում են մի այնպիսի հանգամանքներով պայմանավորված միջավայր, որտեղ գենետիկական պաշարներ տրամադրողները պետք է հավասար պայմաններով բանակցություններ վարեն այդ պաշարների հետագա օգտագործողների հետ և հստակ սահմանեն այն ակնկալվող օգուտները, որոնք գենետիկական պաշարների մատչելիության և դրանց օգտագործումից սացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման վերաբերյալ պայմանագրի շուրջ բանակցող կողմերը պետք է հաշվի առնեն կամ ընդգրկեն պայմանգրում, որպես էական պայմաններ: Ընդհանրապես, պայմանները կարելի է համարել փոխադարձ համաձայնեցված, եթե դրանք բանակցությունների արդյունքում փոխշահավետ են դարձել կողմերի համար: <<Փոխադարձ համաձայնեցված պայմաններ>> արտահայտությունը ինքնին իր մեջ պարունակում է գենետիկական պաշարներ տրամադրող և դրանք օգտագործող կողմերի միջև բանակցությունների ակնկալիք: Այս հետևությունը նախանշում է նման պայմանագրերի պարտադիր պայմանների և առանձնահատկությունների սահմանման, ինչպես նաև այդ պայմանագրերի կնքմանն ուղղված բանակցություններ վարելու համար համապատասխան պրոցեսուրալ պայմանների առկայության կարևորությունը:

18. <<ԿՈՆՎԵՑԻԱ Կենսաբանական Բազմազանության Մասին>>, ՀՀ բնապահպանության նախարարություն, Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր, ոչ պաշտոնական թարգմանություն, 2005թ.

Ուստի պետության կողմից նախապես հիմնավորված համաձայնության առանձնահատկությունները էական ազդեցություն պետք է ունենան նույն պետության կողմից <<Փոխադարձ համաձայնեցված պայմաններ>> հասկացության մեկնաբանման վրա:

Փոխադարձ համաձայնեցված պայմանները, կախված գենետիկական պաշարների օգտագործման եղանակից, կարող են տարբերվել: Մասնավորապես՝ փոխադարձ համաձայնեցման ենթակա պայմանները կարող են տարբեր լինել առևտրային նպատակներ հետապնդող և գիտական հետազոտությունների համար: Հետազոտությունների նշված ձևերի միջև անջրպետ անկկացնելը հիմնականում ծատ բարդ խնդիր է: Ֆիլիպինների Հանարապետության նախագահի հրամանագիրը և Կիրարկման կանոնները այդ տարանջատումը կատարում են ինստիտուցիոնալ հիմքի վրա՝ սահմանելով Գիտական հետազոտություններ կատարելու նպատակով կնքվող համաձայնագրերը որպես կենսաբանական բազմազանության վերաբերյալ համաձայնագրեր, որոնք կնքում են պատշաճ ճանաչում ստացած Ֆիլիպինների համալսարանների, գիտական հաստատությունների, ներպետական կառավարման կամ միջկառավարական կազմակերպությունների և համապատասխան ազգային կառավարական հաստատությունների միջև: Իսկ առևտրային օգտագործման նպատակով հետազոտություններ կատարելու վերաբերյալ համաձայնագիրը սահմանված է որպես ուղղակի կամ անուղղակի առևտրային օգտագործման նպատակով կենսաբանական բազմազանության մշակման իրականացման համար համաձայնագիր, որը կնքվում է ֆիզիկական անձանց, կամ կորպորացիաների, կամ օտարերկրյա միջազգային կազմակերպությունների և համապատասխան ազգային կառավարման հաստատության միջև: Փոխադարձ համաձայնեցված պայմաններ արտահայտության առկայությունը, Կոնվեցիայի տարբեր հոդվածներում գենետիկական պաշարների մատչելիության և այդ պաշարների օգտագործումից ստացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման հետ կապված, գործոքներ կնքող կողմերին թույլ է տալիս կնքել այնպիսի պայմանագրեր, որոնց հիմքում ընկած են արդարության և հավասարության սկզբունքներ:

2.8 ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման սկզբունքը հանդիսանում է Կոնվեցիայի երեք հիմնական դրույթներից մեկը: Նշված սկզբունքը ամրագրված է Կոնվեցիայի ներքոհիշյալ հոդվածներում՝

- 1-ին հոդվածում, համաձայն որի, գենետիկական պաշարների օգտագործումից ստացված օգուտները պետք է համատեղ օգտագործվեն արդար և հավասար հիմունքներով
- 15-րդ հեղվածի 7-րդ մասում, որը պարտավորեցնում է Կոնվեցիայի մասնակից պետություններին հետազոտությունների և մշակումների արդյունքների ու գենետիկական պաշարների առևտրային կամ այլ օգտագործման արդյունքում ստացված օգուտները նման պաշարներ տրամադրող Պայմանավորվող կողմի հետ արդար և հավասար հիմունքներով օգտագործումն ապահովելու նպատակով, համատեղ ձեռնարկել պատշաճ օրենսդրական, վարչական և քաղաքական միջոցառումներ
- 8-րդ հոդվածի j) մասում, ըստ որի մասնակից պետությունները իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան պետք է ապահովեն բնիկների և տեղական համայնքների կենսաանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման համար նշանակություն ունեցող գիտելիքների, նորամուծությունների և փորձի լայն կիրառություն ու դրանցից բխող օգուտներից արդար հիմունքներով օգտվելու հնարավորություն:

Հիշատակված դրույթներն իրենց հերթին պարզորոշ կերպով կապակցված են տեխնոլոգիայի մատչելիության և փոխանցման վերաբերյալ դրույթներին (հոդված 16), կենսատեխնոլոգիայի գործածման և ստացված օգուտների համատեղ օգտագործմանը (հոդված 19), ֆինանսական ռեսուրսներին (միջոցներին) (հոդված 20), ֆինանսական մեխանիզմներին (հոդված 21): Մի շարք այլ հոդվածներ, ինչպիսիք են տեղեկատվության փոխանակման վերաբերյալ հոդված 17-րդը և գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ հոդված 18-րդը, սահմանում են օգուտների համատեղ օգտագործումն ապահովող միջոցներ: Ինչպես, օգուտների համատեղ օգտագործման վերաբերյալ որոշակի, եթե ոչ հստակ, պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է վերոհիշյալ հոդվածները դիտարկել մեկ ամբողջության մեջ:

Ընդհանրապես, Օգուտների համատեղ օգտագործումը պետք է ընդունել որպես գենետիկական պաշարների և դրանց վերաբերյալ գիտելիքների, ներառյալ տեխնոլոգիան, հավասար հիմունքներով մատչելիություն:¹⁹ Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Կոնվենցիան օգտագործում է <<օգուտ>> եզրույթը առանց որևէ մեկնաբանման: մասնավորապես՝ 1996թ-ին Բուենոս Այրեսում գումարած կողմերի երրորդ կոնֆերանսի ժամանակ, կողմերը եկել են այն եզրահանգման, որ <<օգուտներ>> եզրույթի սպառիչ մեկնաբանումն անհնար է, իսկ <<օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործում>> հասկացության մեկնաբանումը պետք է տան Կոնվենցիայի մասնակից պետությունները և/կամ յուրաքանչյուր մասնավոր դեպքում՝ արտածվեն գենետիկական պաշարների մատչելիության վերաբերյալ կնքված գործարքից:²⁰ Հատկանշական է, որ <<օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործում>> հասկացության սահմանումները մինչ ճրս մշակված ներպետական և տարածաշրջանային իրավական ակտերում նույնացված չեն, չնայած, որ այդ ակտերում մեծ ուշադրություն է դարձվել այդ հասկացության սահմանմանը, նշելով՝ համատեղ օգտագործման ենթակա օգուտների կոնկրետ տեսակները: Անդյան Պակտի մատչելիության համընդհանուր համակարգի նպատակներից մեկը գենետիկական պաշարների մատչելիությունից բխող օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է (հոդված 2): Ֆիլիպինների կիրարկման կանոնները սահմանում են ինչպես <<օգուտների համատեղ օգտագործում>>, այնպես էլ <<հավասար հիմունքներով համատեղ օգտագործում>> հասկացությունները: Այդ կանոնների հոդված 1-ինի համաձայն, օգուտների համատեղ օգտագործումը կենսաբանական և բազմազանության ոլորտում իրականացված գործունեության արդյունքների և կենսաբանական կամ գենետիկական պաշարների առևտրային կամ այլ օգտագործումից ստացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործումն է բնիկների, տեղական համայնքների, պահպանվող տարածքների, համապատասխան հողի սեփականատերերի և ազգային կառավարության հետ, համապատասխան հարկահավաք մարմնի վերահսկողության ներքո:

19. Կողմերի երրորդ Կոնֆերանս, Բուենոս Այրես, Արգենտինա (1996թ.) էջ 2

20. Կողմերի երրորդ Կոնֆերանս, Բուենոս Այրես, Արգենտինա (1996թ.) էջ 3

Վերոհիշյալ արդյունքների և օգուտների շարքին կարելի է դասել նմուշների մատչելիության տրամադրման համար վճարները, արտոնագրային վճարները (ռոյալթիները), տվյալները, տեխնոլոգիաները, ներուժի ստեղծումը, որակավորման բարձրացման նպատակով իրականացվող ուսուցումը, համատող կատարվող հետազոտությունները: Նույն հոդվածի համաձայն, հավասար հիմունքներով համատեղ օգտագործում նշանակում է՝ հետազոտություններ իրականացնելու նպատակով կնքված կոնկրետ համաձայնության կողմերի կողմից համաձայնեցված օգուտների համատեղ օգտագործում:

Կոնվեցիայում օգտագործված տերմինների համապարփակ վերլուծությունն անծուծո հանդիսանում է դրանց միանման ընկալման և հետևաբար երկակի չափանիշները բացառելու կարևոր նախապայման: Այսպես՝ <<արդար և հավասար հիմունքներով>> արտահայտության ճիշտ ընկալումը կարող է նաև պայմանավորված լինել համատեղ օգտագործման նշանակությամբ: Կոնվեցիան ոչ մի բառացի հիշատակում չի պարունակում հատուցման կոնցեպցիայի վերաբերյալ: սակայն կոնվեցիայի մեկ ամբողջական կոնտեքստում դիտարկվելիս՝ <<արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործում>> արտահայտության իմասնտ արդեն իսկ դուրս է գալիս <<զենետիկական պաշարների և դրանց ոչ նյութական բաղադրիչների փոխանակության հետ կապված ծախսերի հատուցում>> պարզ և սահմանափակ մեկնաբանությունից, և դառնում է ավելի ընդգրկուն հասկացություն, քան հատուցումն՝: Արդարությունն ու հավասարությունը պետք է հանդիսանան օգուտների ամբողջական փաթեթի բնութագրիչները: Այս իմաստով նմուշների հավաքման համար աշխատավարձերի հատուցումը բխում է արդարության սկզբունքներից, բայց և այնպես չի բավարարում օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման պահանջներին, եթե դա չի ուղեկցվում տեղեկատվության փոխանակմամբ, տեխնոլոգիաների փոխանցմամբ և այլն:

Որպես հասկացություն ընդհանրապես, իսկ որպես Կոնվեցիայում գործածվող տերմին մասնավորապես, <<օգուտ>> հասկացությունը պետք է մեկնաբանել որպես օգտակար, բարենպաստ հանգամանք²¹ կամ ցանկալի հետևանք:²²

21.Օքսֆորդի Անգլերեն Բացատրական Բառարան, (1995թ) „benefit...favourable or helpful factor or circumstance,,

22. Է.Բ.Ադայան, Արդի հայրերն բացատրական բառարան, (Դ-Ֆ), 1976թ. <<Հայաստան>>

Այս կոնտեքստում <<օգուտ>> հասկացության մեկնաբանությունն իր մեջ կարող է ներառել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական բարիքներ:²³ Ամենին պատահական չէ, որ Բոննի ուղեցույցում նշվում են գենետիկական պաշարների օգտագործումից ստացված օգուտների երկու տեսակ՝ դրամական և ոչ դրամական:²⁴ Ըստ ուղեցույցի Հավելված 2-ի, դրամական օգուտներ կարող են համարվել՝ մատչելիության համար գանձվող վճարները, կանխավճարները, տարածամկետ վճարումները, արտոնագրային վճարները (ռոյալթիները), առևտրային օգտագործման դեպքում՝ լիցենզավորման համար գանձվող վճարները, կենսաբանական բազմազանության պահպանմանը և կայուն օգտագործմանն օժանդակող Տրանս Ֆոնդերին վճարվող հատուկ գումարները, աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները, հեղինակային իրավունքի համատեղ ձեռք բերումը, համատեղ ձեռնակատիրություն իրականացնելը և այլն:

Ոչ դրամական օգուտները կարող են ընդգրկել մասնավորապես՝ հետազոտությունների արդյունքների համատեղ օգտագործում, մասնակցություն հումքի մշակման աշխատանքներին, գիտական հետազոտությունների և զարգացման ծրագրերում համագործակցություն, հատկապես կենսատեխնոլոգիական հետազոտություններում (հնարավորության դեպքում գենետիկական պաշարներ տրամադրող երկրում), ուսուցողական դասընթացներ, ex-situ պահպանվող գենետիկական պաշարների պահպանման հաստատությունների մուտքի արտոնագրեր, գենետիկական պաշարներ տրամադրող պետությանը արդար և արտոնյալ պայմաններով տեխնոլոգիաների, ներառյալ կենսատեխնոլոգիաների փոխանցում, կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վերաբերյալ գիտական տեղեկատվության համատեղ վերլուծական ախատանքներ, իստիտուցիոնալ կարողությունների կատարելագործում, աշխատատեղերի ավելացում և այլն:

Մեկ այլ, ոչ պակաս հարց է այն, թե ինչ մեխանիզմով պետք է բաշխվեն կամ համատեղ օգտագործվեն գենետիկական պաշարների մշակման հետ կապված այս կամ այն գործունեության հետևանքով ստացված օգուտները: Բոննի ուղեցույցի համաձայն, օգուտների համատեղ օգտագործման մեխանիզմները՝ օգուտների տեսակետից կախված տարբեր երկրներում կարող են տարբեր լինել (կանոն 49), բայց բոլոր դեպքերում, գիտական հետազոտությունների և տեխնոլոգիաների մշակման ոլորտներում պետք է ներառեն լիարժեք համագործակցություն, ինչպես նաև այն ամենը, ինչը հանդիսանում է առևտրային

23. UNEP/CBD/COP/4/22

24. Կողմերի 6-րդ Կոնֆերանս, Որոշում N° VII/24, (Հաագա 2005թ.)

արտադրանքի հետևանք, ներառյալ՝ համատեղ գործունեությունը, արտոնյալ պայմաններով արտոնագրերը և տրաստ ֆոնդերը (կանոն 50): Չնայած նրան, որ օգուտների համատեղ օգտագործման մեխանիզմները տարբեր երկրներում կարող են տարբեր լինել, այնուամենայնիվ այդ մեխանիզմներում հիմնական ծահառուները հանդիսանում են պետությունները, որպես իրենց սահմանների ներսում առկա գենետիկական պաշարների նկատմամբ ինքնիշխան իրավունքի կողմեր, համայնքներն ու մասնավոր սեկտորի ներկայացուցիչները որպես այդ պաշարների ամշնմիջական տիրապետողներ: Հիմք ընդունելով վերոգրյալը, կարելի է տալ օգուտների համատեղ օգտագործման մեխանիզմի մոտավոր նկարագիրը:

Դրամական օգուտների համատեղ օգտագործման դեպքում, պետությունը՝ որպես նախնական հիմնավորված համաձայնություն տրամադրող, կարող է որոշել պետությանը վճարման ենթական դրամական օգուտների վճարման կարգը: Տվյալ երկրի կառավարության տարբեր օղակները համատեղ կարող են որոշել վերոհիշյալ վճարները ստացողին և այդ վճարներից գոյացած ֆոնդերի ծախսման նպատակային ուղղվածությունը: Ընդ որում, այդ ֆոնդերի կառավարումը և նպատակային օգտագործման ուղղվածությունը պետք է իրականացվի օրենսդրությամբ սահմանված կարգով: Տրանս ֆոնդերի օգտագործումը իր հերթին կարող է լուծել տեղական համայնքների և մասնավոր սեկտորի ներկայացուցիչների դրամական հատուցման խնդիրը: Այս ֆոնդերը կարող են կառավարվել կոմիտեների կողմից, որոնցում ներգրավված են տեղական համայնքների, մասնավոր սեկտորի և պետության ներկայացուցիչները: Այս ֆոնդերը կարող են օգտագործվել տարբեր փախհամաձայնեցված նպատակների համար, մասնավորապես՝ պահպանման ծրագրերի և կայուն ռազմավարության մշակման համար և այլն:

Ոչ դրամական օգուտների շարքում կենտրոնական տեղ են զբաղեցնում տեղեկատվության և տեխնոլոգիայի փոխանցումը, համատեղ հետազոտությունները ու կարողությունների կատարելագործումը: Տեղեկատվությունը կարող է փոխանցվել տարբեր միջոցներով, ինչպիսին են՝ քլիրինգ-հաուզ մեխանիզմները, հրատարակությունները, ինչպես նաև կարող է փոխանակվել կազմակերպությունների միջև; տեխնոլոգիայի փոխանցումը, համատեղ հետազոտություններն ու կարողությունների կատարելագործումը կարող է ապահովվել որակավորման դասընթացների փոխանակման, կոնֆերանսների, գիտական հաստատություններում կամ պարզապես համայնքներում գիտական հետազոտությունների կազմակերպման և in-situ հավաքածուներ պահպանող հաստատությունների հովանավորչության միջոցով: Ընդ որում, գենետիկական պաշարներ հավաքողները և ընկերությունները, ուսուցողական դասընթացներ և սարքավորումներ ստանալու

կարիք ունեցող հաստատություններին ընտրելու և որոշելու համար, պետք է ստանան տեղական համայնքների և կազմակերպությունների օժանդակությունը:

3. ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման հիմնահարցերի ուսումնասիրման և մեկնաբանման նպատակով, Ամերիկյան Միացյալ Նահանգների կոլումբիայի համալսարանի գիտնականներից բաղկացած աշխատանքային խումբը խորացված կերպով ուսումնասիրություններ է կատարել գենետիկական պաշարների մատչելիության և դրանց օգտագործումից ստացված օգուտների համատեղ օգտագործման՝ գործնական կիրառված յոթ դեպքեր (փաթեթներ) կատարել է հետևություններ, բարձրացնելով հետևյալ հարցերի կարևորությունը.

- Որքանով է պահպանվում գենետիկական պաշարների կայուն օգտագործման և պահպանման պահանջը
- Որոնք են շահառուները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում և/կամ ովքեր են հանդես գալիս նրանց անունից
- Ինչպես են գնահատում գույքային իրավունքները
- Ինչպես է ապահովում նախապես հիմնավորված համաձայնությունը

- Ինչպես են օգուտները համատեղ օգտագործվում
- Արդյոք ապահովվում է գենետիկ պաշարների օգտագործման հարաբերությունները կարգավորող պայմանագրի դրույթների համապատասխանությունը իրավական պահանջներին, և կան արդյոք պայմանագրից ծագած վեճերի արդյունավետ լուծման մեխանիզմներ:²⁵

Ուսումնասիրելով վերոհիշյալ խնդիրները, խումբը հանդես է եկել հետևյալ առաջարկություններով.

1. Այն պետությունները, որոնք չունեն ոլորտը կարգավորող ռեժիմների ստեղծման հնարավորություններ, պետք է օգտվեն տարածաշրջանային հաստատությունների աջակցությունից
2. Կոնվեցիայի նպատակների իրականացման պրոցեսում, մատչելիության ռազմավարության արդյունավետության բազմակողմանի և անկախ գնահատումը պետք է ներառված լինի գենետիկական պաշարների մատչելիությունը կարգավորող ռեժիմում:
3. Գենետիկական պաշարների օգտագործման պայմանագրային հարաբերությունները հաստատելու ընթացքում, կողմերը պետք է գիտակցեն, որ կնքվելիք պայմանագրից բխող ոչ դրամական օգուտները առավել կարևոր են քան դրամական օգուտները
4. Ռազմավարության մշակման գործընթացում անմիջականորեն ներգրավված հաստատությունները պետք է փորձեն պարզել այդ գործընթացում որևէ կերպ առնչություն ունեցող պակաս կարևորություն ունեցող շահառուներին
5. Պահպանվող տարածքներից դուրս կենսաբանական հետազոտություններ կատարելու նախաձեռնությունները պետք է խրախուսվեն
6. Ազգային ռազմավարությունը պետք է լուծումներ առաջարկի գենետիկական պաշարների նկատմամբ, օրենսդրորեն ամրագրված գույքային իրավունքների և հողի՝ օրենսդրության համաձայն ու սովորույթի ուժով տիրապետման միջև հնարավոր հակասությունները հարթելու համար

25. <<<<Գենետիկական պաշարների մատչելիության>> ժամանակակից կարգավորման և մատչելիության համաձայնագրերի մշակման և իրագործման գնահատում>>, Շրջակա միջավայրի ռազմավարության ուսումնասիրություններ, աշխատություն թիվ 4, Միջազգային և հասարակական հարաբերությունների ֆակուլտետ, Կոլումբիայի Համալսարան, 1999թ.

7. Հաշվի առնելով, որ բացակայում է առևտրային և ոչ առևտրային հետազոտությունները սահմանազատելու համար որևէ օբյեկտիվ չափանիշ, առաջարկվում է, ապահովել գենետիկական պաշարների օգտագործման համար ներկայացվող դիմումների երկու տարբերակ՝ ըստ առաջնահերթությունների, որը հնարավորություն կընձեռնի դիմորդին ընտրելու դրանցից որևէ մեկը՝ ըստ հետապնդվող նպատակների:

- Տարբերակ 1: Հետազոտություններ կատարելու թույլտվություն՝ առանց այդ հետազոտությունների արդյունքներից ապագայում ստացվելիք օգուտների և հեղինակային իրավունքների նկատմամբ որևէ իրավունքի հավակնելու հնարավորություն
- Տարբերակ 2: Թույլտվություն ստանալու բարդեցված ընթացակարգ, որը կընդգրկի հետազոտությունների արդյունքներից ծագող հեղինակային իրավունքներ, ինչպես նաև դրամական և ոչ դրամական օգուտներ ստանալու համար բանակցելու հնարավորություններ:

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանը հանդիսանում է <<կենսաբազմազանության մասին կոնվեցիայի>> կողմերից մեկը:

Մինչ օրս Հայաստանի Հանրապետությունը քայլեր է ձեռնարկել Կոնվեցիայից բխող պարատականությունների կատարման ուղղությամբ՝ ելնելով Կոնվեցիայի կենսաբազմազանության պահպանության և կենսաբազմազանության բաղադրիչների կայուն օգտագործման նպատակներից:

Կոնվեցիայի շրջանակներում 1999թ. պատրաստվել է առաջին և երկրորդ զեկույցները, այժմ նախապատրաստական աշխատանքներ են տարվում երրորդ զեկույցի պատրաստման ուղղությամբ:

1999թ.-ին պատրաստվել է <<Հայաստանի կենսաբազմազանության գործողությունների ծրագիր և ռազմավարություն>>: Գործողությունների ծրագիրը սահմանում է կենսաբազմազանության պահպանության գերակայությունները, որոնց թվում են նաև ոլորտը կարգավորող օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումները:

Կենսաբազմազանության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը որպես գերակայություն սահմանել է՝

ա) պահպանվող տարածքների պլանավորման և կառավարման նպատակով ազգային նորուժի գնահատում

բ) բույսերի գենետիկական պաշարների համար երկարատև ֆինանսական աջակցության երաշխավորում և այն գործողությունների հզորացում, որոնք կնպաստեն ազրո-կենսաբազմազանության պահպանության համար տնտեսական բնապահպանական և սոցիալական տեսանկյուններից կայուն լուծումներ

գ) գյուղատնտեսական փորձառություններում կենսաբազմազանության խնդիրների ներառում:

1999թ-ին մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել են՝

- <<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքը
- <<Կենդանական աշխարհի մասին>> ՀՀ օրենքը:

ՀՀ կառավարության 2002թ-ի դեկտեմբերի 26-ի թիվ 54 արձանագրային որոշմամբ ընդունվել է <<Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր>>-ը: Ռազմավարությունը կարևորվում է պահպանվող տարածքների դերը կենսաբազմազանության, հատկապես հազվագյուտ և անհետացող տեսակների in-situ պահպանության գործընթացը:

Ծրագրի խնդիրներն են՝

- Սահմանել ՀՀ հատուկ պահպանվող տարածքների պետական ռազմավարության մոտեցումները և սկզբունքները
- Ստեղծել ՀՀ բնության պահպանվող տարածքների համակարգի հայեցակարգային մոդել, ու սահմանել համակարգի ստեղծման և հայեցակարգին մոտեցնելու միջոցառումների իրականացման առաջնահերթությունները
- Կազմել գործողությունների ծրագիր ըստ առաջնահերթությունների:

Ռազմավարության Բնության Հատուկ պահպանվող Տարածքներ (այսուհետ նաև ԲՀՊՏ) գնահատական ենթազլխում հստակ ամրագրված է, որ ԲՀՊՏ պահպանության տակ են վերցնում Հայաստանի ֆլորայի և ֆաունայի 60%-ը, որոնց թվում է հազվագյուտ, անհետացող, վտանգված և էնդեմիկ տեսակների գերակշռող մասը, ինչպես նաև վայրի գենետիկական պաշարները:

Ռազմավարության սկզբունքներից մեկը գենետիկական պաշարներից և կենսատեխնոլոգիաներից օգտվելու երաշխավորված ազատ մատչելիության և օգտագործման արդյունքների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման ապահովումն է:²⁶

26. Հարկ է նշել, որ մինչ օրս այդ ոլորտը կանոնակարգելու ուղղությամբ ՀՀ օրենսդրի կողմից որևէ գործողություն ձեռնարկված չէ:

Ռազմավարության օրենսդրական բարեփոխումներ ենթազլխում նախատեսված է կատարել հետևյալ օրենսդրական փոփոխություններ՝

- ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենքում²⁷
- ՀՀ անտառային օրենսգրքում:²⁸

Մշակել և շրջանառության մեջ դնել նոր օրենքներ և իրավական այլ ակտեր՝

- Մասնավոր սեփականության տարածքներում կենսաբազմազանության պահպանության խրախուսման միջոցների մասին
- Բնապահպանական կազմակերպություններում հարկային արտոնությունների մասին
- Լանդշաֆտների պահպանության մասին
- ԲՀՊՏ վերաբերյալ մի շարք կարգեր:²⁹

ՀՀ կառավարության 2005թ-ի հունիսի 16-ի <<ՀՀ կառավարության 2004թ-ի դեկտեմբերի 2-ի թիվ 1840-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և երեք գլոբալ <<Կենսաբազմազանության մասին>>, <<Կլիմայի փոփոխության մասին>> և <<Անապատացման դեմ պայքարի մասին կոնվեցիաներից բխող՝ խաչաձևվող խնդիրների իրականացման, միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> թիվ 880-Ն որոշմամբ, հաստատվել է երեք Գլոբալ Բնապահպանական Կոնվեցիաներից բխող խնդիրների իրականացման միջոցառումների ցանկը: Հաստատվել է նաև Ժամանակացույց, համաձայն որի բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի մեջ պետք է իրականացվեն փոփոխություններ երեք Գլոբալ Բնապահպանական Կոնվեցիաների դրույթների իրականացման նպատակով: Ժամանակացույցը նախատեսում է նաև Կոնվեցիայի առանձին հոդվածների մոտեցումների իրականացման վերաբերյալ մեխանիզմներ մշակել ՀՀ օրենսդրության մեջ, մասնավորապես՝

27.Ներկայումս պատրաստվել է նոր օրենքի նախագիծ, որը գտնվում է ՀՀ կառավարության քննարկման փուլում

28. 2005թ-ին մշակվել և ընդունվել է նոր օրենսգիրք:

29. Մշակվել և ներկայացվել է ՀՀ կառավարությանը:

- Կոնվեցիայի 8 հոդվածի համաձայն, 2006թ-ից մինչև 2008թ-ը ներառյալ, համապատասխան փոփոխություններ կատարել՝
 1. ՀՀ հողային օրենսգրքում
 2. <<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքում
- Կոնվեցիայի 20-րդ և 21-րդ հոդվածների համաձայն, 2005թ-ից մինչև 2006թ-ը Կոնվեցիաների խաչաձև խնդիրները իրականացնելու նպատակով ստեղծել այդ խնդիրները համակարգող պաշտոնական խորհրդակցական մարմին
- Կոնվեցիայի 12-րդ և 13-րդ հոդվածների համաձայն, 2005թ-ին նույն Կոնվեցիայով նախատեսված դրույթների իրականացման համար՝ մշակել/կադրերի պլանավորման ռազմավարական մոտեցումների ծրագիր (կարիքների գնահատում, մասնագետների վերապատրաստման ծրագրեր)
- Կոնվեցիայի 7-րդ հոդվածի համաձայն, 2005թ-ից մինչև 2008թ-ը ներառյալ, պետք է իրականացվի շրջակա միջավայրի մոնիտորինգի դիտարկման ցանցերի ընդլայնում, տեխնիկական հագեցվածության բարելավում, տվյալների հավաքագրման և վերլուծության համակարգի կատարելագործում և հզորացում
- Կոնվեցիայի 18-րդ և 25-րդ հոդվածների համաձայն, 2006թ-ից մինչև 2008թ-ը ներառյալ, պետք է մշակել մեխանիզմներ՝ տնտեսական և գիտակիրառական ուսումնասիրությունների ֆինանսավորման համակարգում նույն կոնվեցիայից բխող խնդիրներն ընդգրկելու համար
- Կոնվեցիայի 16-րդ և 17-րդ հոդվածների համաձայն, 2006թ-ին պետք է ձևակերպել Կոնվեցիաների իրականացմանը նպաստող տեխնոլոգիաների մշակման, զարգացման, փոխանցման և ներդրման համակարգ, ստողծելով՝ Կոնվեցիաներով նախատեսված տեխնոլոգիաների ազգային տեղեկատվական միջնորդ մեխանիզմներ և էլեկտրոնային տվյալների համակարգեր
- Կոնվեցիայի 8-րդ և 11-րդ հոդվածների համաձայն, 2006թ-ից մինչև 2008թ-ը ներառյալ, պետք է մշակել Կոնվեցիաների իրականացմանն ուղղված կատարելագործված ֆինանսական մեխանիզմների վերաբերյալ ծրագրեր՝ ներառյալ բնօգտագործման վճարների համակարգի կատարելագործումը, արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը և մասնավոր սեկտորի հովանավորչության խթանումը, բնապահպանական տրանսպորտային ֆոնդերի հիմնումը: Բացի այդ, նույն հոդվածներով 2006թ-ից մինչև 2010թ-ը ներառյալ,

նախատեսվում էմշակել բնական պաշարների տնտեսագիտական գնահատման մեթոդոլոգիական մոտեցումների ծրագիր:

Վերը նշված միջոցառումներից և Կոնվեցիայի 16-րդ հոդվածի վերլուծումից բխում է, որ 2006թ-ին նախատեսված է իրականացնել տեխնոլոգիաների մշակման, զարգացման, փոխանցման և ներդրման համակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքներ: Վերոգրյալում նշված 2005թ-ի հունիսի 16-ի ՀՀ կառավարության թիվ 880-Ն որոշումը վերլուծելիս, ակնհայտ է դառնում, որ այդ որոշումը որևէ կերպ չի անդրադառնում Կոնվեցիայի այն նպատակի իրականացմանը, որը վերաբերվում է գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործմանը:

Մասնավորապես, ցանկում ներառված չեն այն միջոցառումները, որոնք կնպաստեն Կոնվեցիայի 15-րդ հոդվածի իրականացմանը, այն է՝ գենետիկական պաշարների մատչելիությունը և օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործումը: Հետևաբար, նախատեսված չէ նաև այդ ուղղությամբ հայեցակարգի մշակմանն ուղղված աշխատանքների կատարման միջոցառումները: Սակայն, ինչպես արդեն նշվեց, 2002թ-ին ընդունված <<Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր>>-ը գենետիկական պաշարների մատչելիության և օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործման համակարգը ամրագրել էր որպես սկզբունք:

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանի Հանրապետությունը միացել է Բոննի ուղեցույցին, որը պարունակում է մի շարք խորհրդատվական բնույթի կանոններ, Հետևաբար, ուղղորդվելով այս ուղեցույցի մոտեցումներով և սկզբունքներով, ՀՀ-ը կարող է մշակել հայեցակարգ, որն էլ իր հերթին կնախատեսի գենետիկական պաշարների պահպանության, կառավարման և մատչելիության, ինչպես նաև դրանց օգտագործումից ստացված օգուտների համատեղ օգտագործման վերաբերյալ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ, Կարելի է ենփադրել, որ օրենսդրական բարեփոխումները կընթանան արդեն գործող իրավական ակտերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու, ինչպես նաև նոր օրինագծեր պատրաստելու ուղղությամբ:

<<Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման օետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագիր>>-ի ընդունումից հետո, մշակվեց <<ԲՀՊՏ մասին>> ՀՀ օրենքի նոր նախագիծ, որը ամրագրել է այդ տարածքների կառավարման ծրագրերի գաղափարը, ինչը բացակայում էր նախկինում, ինչպես նաև

առաջարկել է, որպես կառավարման նոր մոդել, ընտրել կենսոլորտային արգելոցի գաղափարը: Նախագիծը հիմնվում է ռազմավարության մեջ սահմանված գերակա սկզբունքների վրա և, կարևորում է պահպանվող տարածքների դերը կենսաբազմազանության, հատկապես հազվագյուտ և անհետացող տեսակների in-situ պահպանության գործընթացում:³⁰

Առանձին ԲՊՀՏ կառավարման ծրագրերի մեջ պետք է ներառել տվյալ տարածքում աճող բուսական գենետիկական պաշարների հավաքի և պահպանության վերաբերյալ դրույթներ: Սակայն այդ նախագիծը չի նաժատեսում դրույթներ գենետիկական պաշարների (սաղմալազմ կրող) հավաքի վերաբերյալ, ինչը հետագայում ենթաօրենսդրական ակտ ընդունելու հնարավորություն կընձեռեր:

<<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքի նախագիծը սահմանում է բուսական օբյեկտների նկատմամբ սեփականության իրավունքի տարբեր ձևեր՝ պետական, համայնքային և մասնավոր: Նույն սեփականության իրավունքի ձևերը ամրագրված են ՀՀ անտառային օրենսգրքում: Այս իրավական ակտերում փոփոխություններ կատարելու դեպքում խնդիր կառաջանա սաղմալազմի սեփականության իրավունքի հետ կապված: Հետևաբար, ավելին, նպատակահարմար է այն ամրագրել առանձին օրենքով, որը մանրամասն կանրադառնա գենետիկական պաշարների (սաղմալազմ) կառավարման և պահպանության հարցերին:

Նախատեսվող օրենքի նախագիծը կկարգավորի գենետիկական պաշարների հավաքի, պահպանության և կառավարման, ինչպես նաև դրանց օգտագործումից ստացված օգուտների համատեղ օգտագործման ընթացքում առաջացած իրավահարաբերությունները: Հարկ է նշել, որ սաղմալազմի պահպանության և կառավարման համար խիստ անհրաժեշտ է ամրագրել պետության բացառիկ սեփականության իրավունքը դրա նկատմամբ: Նախագիծը կսահմանի պետական լիազոր մարմինների իրավասությունները, ինչպես նաև կառավարման արդյունավետության համար կարող է նախատեսել միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծման հնարավորություն (իր հստակ ամրագրված լիազորություններով), որտեղ կարող են ներառվել ինչպես պետական լիազոր մարմինները, այնպես էլ գիտական հաստատությունները, տեղական համայնքների և հասարակական կազմակերպությունների նորկայացուցիչները:

30. <<in-situ պահպանություն>> տերմինը Կենսաբազմազանության մասին կոնվենցիայում սահմանվում է որպես էկոհամակարգերի և բնակատեղերի պահպանություն, իսկ տեղայնացված կամ մծակվող տեսակների պարագայում՝ <<in-situ պահպանությանը>>՝ շրջակա միջավայրն է, որտեղ վերջիններս զարգացրել են իրենց առանձնահատկությունները:

Հիմնվելով Բոննի ուղեցույցի սկզբունքների և մոտեցումների վրա, միջգերատեսչական հանձնաժողովը կարող է գործել <<քլիրինգ հաուզ/գենետիկական պաշարների օգտագործման վերաբերյալ պաշտոնական խորհրդակցական մարմնի>> մեխանիզմների հիման վրա, միաժամանակ ապահովելով տվյալ գենետիկական պաշարների վերաբերյալ լիարժեք տեղեկատվության տրամադրում և մատչելիություն:

Նախագծում կսահմանվեն գենետիկական պաշարների հավաքման և օգտագործման հիմնական սկզբունքները, հավաքի և հետագա ուսումնասիրությունների համար թույլտվության անհրաժեշտության պայմանը, ինչպես նաև լիազոր մարմինը, որը կտրամադրի այդ թույլտվությունը՝ պաշտոնական խորհրդակցական մարմնի եզրակացության հիման վրա: Թույլտվության տրամադրման կարգը, ժամկետները, ձևերը (ինչ տեղեկատվություն պետք է ներառի իր մեջ թույլտվությունը) և այլ մանրամասնությունները հետագայում կսահմանվեն առանձին կարգերով: Ինչպես արդեն նշվեց, առանձին տարածքներում գենետիկական պաշարների հավաքի թույլտվությունը կարող է տրամադրվել գենետիկական պաշարների օգտագործման վերաբերյալ պաշտոնական խորհրդակցական մարմնի եզրակացության հիման վրա: Նախագիծը հստակ կսահմանի գենետիկական պաշարներ օգտագործող անձանց իրավունքները և պարտականությունները:

Օրենքի նախագիծը հղում կկատարի ԲՀՊՏ կարգավորվող օրենսդրական դաշտին՝ ԲՀՊՏ որպես կենսաբազմազանության in-situ պահպանման կարևոր օղակ:

Նախագծում պետք է տեղ հատկացվի համայնքային և մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքներին, որպես բույսերի գենետիկական պաշարների աղբյուր/տարածք: Այդ տարածքները կարող են փոխանցվել հավատարմագրային կառավարման պայմանագրով, պայմանագրային պայմանները և դրանցից բխող պարտավորությունները նույնպես կամրագրվեն նախագծում:

Օրենքի նախագիծը պետք է նախատեսի դրույթներ գենպաշարների կառավարման նախագծի մշակման վերաբերյալ, որոնք կարող են ամրագրել առանձին գոտիների ետեղծման գաղափարը (բույսերի գենետիկական պաշարների պահպանության և կառավարման համար):

Հավաքված գենետիկական պաշարների օգտագործումից ստացված օգուտների ձևերը, ինչպես նաև դրանց համատեղ օգտագործման մեխանիզմները և օգուտների առանձին տեսակները կսահմանվեն նախագծի մեջ: Նախագիծը պետք է

ընդգրկի և մշակի բույսերի գենետիկական պաշարների արտահանման և ներմուծման վերաբերյալ ընդհանուր սկզբունքները:³¹

31. Այս հարցը մասամբ կարգավորվում է ՀՀ կառավարության 2002թ-ի հուլիսի 17-ի թիվ 1173-Ն որոշմամբ: